451
L. III. 3

ՊԵՂԱՐՒԵՍՏԱՐԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԿՐԱԳՈՒԲԵՒՆԱԿԱՆ

№ 1 ՅՈՒՆՒԱՐ 1890

„Տարազը“ հրատարակւում է Թիֆլիսում՝ սկսելով յունուարից մեր յայտնի հեղինակների եւ նկարիչների մասնակցութեամբ, ամիսը մի անգամ, քառածալ:

„Տարազի“ տարեկան բաժանորդագինն է 3 ր. առանձին համարը 50 կ. Խմբագրութեան գրասենեակը գտնւում է Գօլովինսկի եւ Բարիատինսկի փողոցների անկիւնում: բաց է ամեն օր, բացի կիրակի եւ տօն օրերից, առաւօտեան ժամը 10-ից մինչեւ 3-ը եւ 5-ից մինչեւ 7-ը, իսկ խմբագրատունը՝ Բարիատինսկայա փողոցի վրայ է, տուն №4: Ընծայական տետակցութիւնը երկուշաբթի եւ ուրբաթ կէսօրին, ժամը 12-ից մինչեւ 1-ը, իսկ չորեքշաբթի երեկոյեան 6-ից մինչեւ 7-ը:

Անպատճառ ուղարկւած յօդւածները խմբագրութեան սեպհականութիւն են համարւում: յօդւածները կրճատւում են, փոփոխւում, եւ չբարեւոքները չեն վերադարձւում հեղինակին, եթէ երեք տպագրական թերթից աւելի չէ: Այն բաժանորդը, որ մի ամսւայ ընթացքում №-ը լոյս տեսած եւ յայտարարած օրից չի տեղեկացնիլ իր №-ը չստանալու համար, ամբողջ խմբագրութիւնս իրան պատասխան չի համարում բաւականութիւն տալ այդպիսիներին:

ԱՐԲԻ ԵՒ ՉԱՐ ՈՍԿԵՐԻՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ

Հեռուկայ հասարիդ ոկսում ենք „Տարազի“ հրատարակութիւնը: Թէ ինչ տիտղ չունի „Տարազը եւ թէ ինչ դրութեամբ մենք ձեռնարկեցինք տպագործի մի հրատարակութեան, մասամբ մենք ասել ենք արդէն, նորից կրկնել պէտք չենք համարում, մանաւանդ, որ մեր սովորութիւնը խօսքը չէ, այլ գործերը, եւ ով կամ ինչ կարող է այդպէս պերճախօս չինել, քան նոյն իրերը գործը: Ուշ մենք իսկ յայտնած ենք մեր յարգելի ընթերցողներին, որ ամենայն ջանք չպակասի խնայելոց, որպէս զի „Տարազը“ չինի այն, ինչ որ մենք ենք կամենում եւ մեզ հետ շատ շատերը: Իսկ մեր կամեցածն է՝ մի հզօր, շատ հզօր համադրում, մանաւանդ, որ մեր ազգութիւնը ունենայ թէ՛ նոյնին եւ թէ՛ արտային կողմից: Հայ. մենք չհայտնած ենք, որ մեր դատեցութիւնը կիրարկութիւն: „Տարազի“ շուրջն են հայ ուսումնական ներկայութիւնները, Հայաստան նշանաւոր նկարիչներից եւ փորագրիչներից շատերը, դերասանական դպրոցի հիմնարկութեան յարգանքածանչութիւնն նոյնպէս ձախողութիւնները եւ վերջապէս հայ երիտասարդութեան, կոմսոմոլ, օրիորդների բանական հասկացողութիւնն ու ուշադրութիւնը: Ասոնք բոլորը մեզ թեւ ու թիկունք են եւ դրական են մեր ձեռնարկած դործի յաջողութեանը:

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Քան Լօյանեան:

Եւ անա նշան, տեսիլք հրաշալի,
Երեւում էր ինձ բարձրումն աշխարհս—
Մի հարթ անապատ՝ սիրուն, նազելի,
Ցաւում, երկնում էր երկնի վրայ:

Արեգակն ամբողջ վրան էր փռւած,
Լուսինն ընկել էր նրա ոտի տակ,
Եւ նրա գլխին ատղերը խմբւած,
Յօրինել էին լուսեղէն պսակ:

Ցնծում էր երկինք, եւ համարանձ
Դողդղ էր շուրջը նախշուն ծիածան,
Բարի ոգիներ՝ սիրուն, լուսաթեւ,
Երկնագին հարթին կայծն փաթաթած:

Եւ տարածութեան անհուն խորքերից
Ահա դուրս եկաւ մի հրէշ սոսկալի,
Կրակ էր թափում իր երախներից՝
Հրեղէն վիշապը եօթը գլխանի:

Ցարկեց պոչովը եւ վայր գլորեց
Երկնքից գետինը նազելի հարթին.
Մեղազ ոգիքդ նա լոյս բաց արեց,
Որ ծնել էի՝ կուլ տայ երկուսին.

Եւ հարթն ազատուեց, մի տղայ բերաւ—
Մի աստուածային հրաշալի գառնակ,
Որ իսկոյն երկինք յաղթականգաւ.
Եւ պսակազարդեց հօր ծնեսքի տակ:

Իսկ մայրը փախաւ, քնկաւ անապատ,
Մխրճեց ծէր-ծնրը նրան կեղտակոյտ,
Ցայրացաւ, կատղեց հրէշը յոտատակ,
Եւ երկնքի դէմ կրկ սկսեց:

Բէկոզներուն էր այդ անհաշտ ոգին,
Նա էր գլուխը բոլոր դիւերի,
Եօթը ֆազ ունէր դրած իր գլխին,
Նշան մահացու եօթը մեղքերի:

Հրեշտակ, տատանայ դէմ առ դէմ նրան.
Սոսկալի, ահեղ կռիւն սկսեց.
Երկինքը ու գետինը իրար խառնեցան,
Վիրքը ատամնան գետին գլորեց:

Քաջ Միքայէլը իր կատ նիզակով
Եօթը գլուխն էլ մէկ-մէկ չարաչարեց,
Եւ հրեշտակների հրեղէն արեւով
Ջար ոգիներին խաղատ հալածեց . . .

Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ջ. ԼԵՈՊԱՐԴԻՑ

Սիրոյ ցնորքներ, վա՜մ երազներ. . .
Նորա հոյակապ զործի են պատճառ.
Եւ զարնանագեղ կուսի հրապոյրներ
Տալիս են նոցա միշտ կեանք ծաղկավառ:
Բայց եւ նա ըննաւ սէր չէ ճանաչում,
Ամ՛ սիրտը երկչոտ մ՛ընում՛ է ըննած,
Երբ արեղ մ՛ընկից երկինքն է գոչում,
Երբ դիզանում՛ են ալիք կատաղած:
Երբ ամպերի մէջ կորած լեռներին
Զարկում՛ են ուժգին բոցավառ շանթեր,
Խամրով բորբոքած ազատ աչերին
Երեւում՛ է եւ ցընորք անվերջ. . .
Ո վ կանայք, ով որ ատորոգութեամ՛բ
Ծունկ է խոնարհում՛ հար քահտի առաջ,
Ով որ լռում՛ է, ստրուկ ըզգացմ՛ամ՛բ,
Երբ հայրենիքի բաժինն է հառաչ,
Ով երկչոտութեամ՛բ փախչում՛ է դաշտից,
Ուր որ պողպատի ցոլում՛ են աըրեր,
Եւ չուզէ զրկուել անփառ հանգստից,—
Ո՛հ, նա չըգիտէ սիրել ձեզ, կոյսեր:
Երբ նա ձեզ մ՛օտ զայ ստերա շրթունքին—
Հեռացէ՛ք դուք լուռ արհամարհանքով.
Թուլամորթի, ըստոր, երկչոտ ստրուկներին
Դուք մի՛ պըտակէք սիրոյ պըտակով:

Ց. ՑՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.

ՄԻՆՉ ԱՅՍՊԻՍ, ՄԻՒՍԸ ԱՅՆՊԻՍ

Ա.

Ես ինչ չեմ հասկանում . . . նեղքես չէ նստում . . . բուսական լսելի ձայնով վրնդմփրնդմում էր մի վոգբլիկ մարդ, որ մոլորուած կեպով ցած էր լջնում եռայարկ տան բարձր, մարմարեայ սանդուխքներից:—Մարդը գուքանի համար լաւ աշակերտ է ուզում, կինիկը տան համար լաւ ծառայ է ուզում: Ալի ու հասկացիր, Թէ որն է դրանց ուզած „լաւը„: Ոչին որ տանում ես, չեն հաւանում:

Տրանջողը այն ստոլհան պաշարուած էր իւր մտածութիւններով, որ մինչև անգամ Թոդել էր գեղեցիկ կապերտի երկար գօլը, որ ձգվում էր սանդուխքների կատարից մինչև նրանց ստորոտը,—և ամեն անգամ զարմանում էր, Թէ ինչու իւր կոշիկները տալԹաքում են հայելու նման վայրկն եւ վզոսկրի նման կոկ մարմարիոնի վրա:

Երբեմն դնդչելով կնտրօնների մեծ ծառերին, երբեմն քաւելով ծաղիկների Թաղարներին, որ զարդարում էին վառարանը տանդուղքների աջ և ահեակ կողմերը, վերջապէս, մեծ ջանքերով ցած լջաւ նա եւ ծանր դուռը իւր եսիւից կողպելով, դուրս եկաւ վոդոց: Այստեղ կանգ առեց և, զբաղնից հանելով դունաւոր Թաշկինակը, սկսեց սրբել ճաղատ ճակատի քրտինքը:

Փողոցում կանգնած, սպասում էր նրան մի լաւ հագնուած նմերէլ պատանի, որ իւր առողջ ու յաջողակ նայեղքով մի քանի րոպէ առաջ ցած էր լջել նոյն տանդուղքներից:

—Ի՞նչ ասաց,—անհամբերութեամբ հարցրեց պատանին:

—Չը հաւանեց,—պատասխանեց վոգբլիկ մարդը:

Պատանին ուժգնութեամբ հեռացաւ:

Դա տասներորդ „նմուշն„ էր, որ նա տարել էր ցոյց տալու, բայց եռայարկ տան սիրնոջ հաւանութիւնը չէր գտել:

Փոգբլիկ մարդը, որին կոչում էին Աբրահամ Պետրովիչ, սպասուորների և ծառաների „դպրոց„ էր: Ժամանակները ոչնչ ազդեցութիւն չէին գործել նրա վրա: Նա դեռ կրում էր այն տարազները, որ հագնում էին երեսուն, քառասուն տարի առաջ,—չուխայ, արխալուղ, լայն շալվար, մեստաքսեայ գօտի եւ այլն: Միակ փոփոխութիւնը եղել էր նրա՝ ոչ Թէ գլխի մէջ, այլ գլխարկի մէջ: Վաղեմի մորԹեայ գտակի փոխարէն՝ կրում էր ռուսական „ֆուրաշկայ„: Նրա ամբողջ հագուստը, մշտական կեղտի Թանձր խաւերի նեըքոյ, այն աստիճան կոփուել էին, որ փայլում էին, կարծես Թէ, սև մոմամբ ւլնէին կարուած: Փայլում էր և մոյգ-Թխադոյն դէմքը, որը, կարծես Թէ, սև նաւԹով լինէր օծուած: Չէին փայլում միայն փոշեպատ կօշիկները, որ երանց կեանքում՝ գուցէ մի քանի անգամ բախտ էին ունեցել կօշկաներին հանդիպելու, Թէև Աբրահամ Պետրովիչը բաւական ունևոր մարդ էր:

Եռայարկ տունը, որտեղից դուրս եկաւ նա, կազմում էր Թվիլիսի Սօլօլակ կոչուած Թաղի գեղեցիկ զարդերից մէկը: Նա դեռ կանգնած էր այդ տան շքեղ դռան առջեւ, և մտայոյզ աչքերով նայում էր դէպի ծառազարդ փողոցի ընդարձակութիւնը: Նորաբողբոջ ակացիաների երկար շարքը, որ ձգուել էին փողոցի երկու կողմերում, դեռ նոր էին բաց արել երանց ծաղիկների սալտակ փունջերը, և դեռ նոր կնկարկում էին զարնանային հովասուն առաւօտը երանց նուրբ անուշահոտութեամբ: Բայց այդ չէր գրաւում Աբրահամ Պետրովիչին: Նրա միտքը կլանուած էր լուր գործով:

Ցանկարծ շարժուեցան նրա կարճ ոտները, երանց հետ և շարժուեցաւ բաւական հատ գառազանը, որ բռնած ունէր լուր ձեռքում: Նա չտապով գնում էր և, մի և նոյն ժամանակ, լուր մտքում շարունակում էր ընդհատուած մենախօսութիւնը.

„Մարդու բանը հեշտ է, կը ջնեմ: Այն տղային, որ ասել է նա, ենչպէս որ լինի, դուրս կը պրիմ լուր մօրից: Բայց ինչ պէտք է արած այդ „կասլիզնի„ տղիկ պատրոնի հետ: Որին որ տանում եմ, միշտ մի պահաստութիւն է գտնում: Ախտը առանց պահաստութեան՝ մարդ կը լինի:—Դա շատ մեծ է, ասում է, նա շատ պստիկ է, ասում է. դրա բոյը կարճ է . . . նրանը շատ երկար է . . . դրա մազերը դեղին են . . . միւսի քիթը դլուը չէ գալիս . . . Ոչ է մնում, որ ասէ, Թէ տասները ինչպէս պէտք է լինեն: Տօ, հէրօհնած, ծառան լաւ „կուկլայ„ չէ, որ զարդասրանքի համար լինի: Դոնէ մի անգամ էլ չի հարցնում, Թէ ինչ նեղքի տէր է, ինչ գնահէ, կամ ինչ կարող է ջնել:

Թէև Աբրահամ Պետրովիչը նրան դժգոհ էր ձևացնում քմահաճ սիրնոջ յանձնարարութիւնից, որը, երևս, սպասաւորների ընտրութեան մէջ ստոլիկ նոտոպատիւն էր, բայց ինքը, Աբրահամ Պետրովիչը, նոյնպէս բարի պատուհերից չէր: Ընկնոջ պահանջները մի առանձին հաճութիւն էին պատճառում նրան, բայց ամենայն նանամքով Թաքցնում էր: Աբրահամ Պետրովիչը Սօլօլակի բարձր շրջանի՝ համարեա բոլոր աներում ծառայող սպասաւորների պատրիարքն էր, և միանգամայն նրանց հոգաբարձուն: Նա այն ստոլհան հեղինակութիւն էր վայելում լուր Թեմի մէջ, որ կարող էր ամեն տեսակ վոխոխութիւններ անել,—մէկին լուր տեղից հանել և մի այլ տեղ կանգնացնել, միւսին լուր ցանկացած տեղը տալ: Դրա համար հարկաւոր էր միայն աւելացնել մի քանի ըուբլի: Բայց Աբրահամ Պետրովիչը այնքան հեռատես էր, որ ծառաների հետ սերտ կապը պահպանելու նպատակով, շատ անգամ լուր գրպանից ծախսելու վրդ էր տալիս նրանց, երբ անգործ էին, և այնքան սպասում էր, մինչև տեղ գտնէին: Ջար լեզուները ասում էին, որ ծառաները լրանց դո-

զացած երեկՀՆԵՐը նրան կՀն յանձՆում վոՀՃաՀելու Համար։ ՁմՄարկաը Աստուած գիտէ, ՄիայՆ այՆքանը Ճիշտ էը, որ ծառաՆեՐը չափազանց հրա ՀՆի դէպի նա։

Նա գիտէը, ԹէՀ որտեղ ավ է ծառայում, կամ ինչ ուՃՃիվ է ծառայում։ Նա հՀՆց առաջին անգամից իմացել էը տիկՆոջ սահմանքածը ՆերկայացՆել նրան, բայց զոյծը գլխամաը երկարացՆում էը, որովհետև ամեՆ անգամ, երը իւը ամէնիՆերից մէկին բերում էը ցոյց տալու տիկՆոջը, ԹէՀ նրա հատուՆուԹիւՆՆ ևս չէին գոՆում, բայց դարձեալ առաջաՃիւՆ տիկՆը դՆում էը Արտեմ Պետրովիչի ափի մէջ երեք ռուբլիանոց մի ԹղԹադրամ, իբրև „ապաղի վոզ“։

Բ.

Պատաքի չէա ընկած Թաղերից մէկի խուԹեան մէջ՝ գըտնվում էը մի հին, քայքայուած տուն, որ վաղուց ասիկանուԹեան ուշադրուԹիւՆից ազատուելով, դեռ պահպանում էը իւը Թշուառ գոյուԹիւՆը, որ ամեՆ րոպէ սպառՆումէը կործանուել, և իւը հետ հարիւրաւոր աւելի Թշուառ բնակիչՆեր ի գերեզման տանել։ Այդ տունը պատկանում էը մի հարուստ, որը, որպէս դժուարանում էը կարկատել տալ իւը պատուռուած հօղիկՆերը, նոյնպէս և դժուարանում էը նորոգել իւը քայքայուած չէՆքը, մտածելով. „այապէս էլ եօլայ կըգՆայ, քրահը լաւ տանում եմ“ . . . Նրա ընդարձակ բակում երբեմՆ գիշերում էին կառապաՆՆերը։ ՁիաՆերի աղբը, և քանդուած սեՆեակՆերի աղիւսները, կուտակուելով մէմեանց վրա, այնտեղ ահագին բլրակՆեր էին կազմել։ ԳարշահոտուԹիւՆը անտանելի էր։ Ողջ մՆացած սեՆեակՆերում բնակվում էին լուացարար կանայք, և մուայլ, կասկածաւոր հասարակուԹիւՆ, որ յայտնի չէը՝ ԹէՀ ինչով էին պարապվում, կամ ինչ միջոցներով էին ապրում։

Ներքին յարկի տորերկրեայ նկուղներից մէկի մէջ՝ բնակվում էը մի այրի կին։ Այդ կոՆաւ, օդից ու լոյսից զրկուած նկուղը մի ժամանակ ծառայում էը վերևի կենդողի համար որպէս վուցտանոց, իսկ յետոյ, աւելորդ համարելով, վարձով տուեց, ամՆը յիսուՆ կոպէկ տտանալով աղքատ այրիից։

Նկուղի մեակ կարասին վոքրիկ Թախտն էը, որ դժուարուԹեամբ տեղաւորուել էը Նեղ լուսամուտի առջև, որի երկու ծառուած վեդիները պահպանել էին երկու ապակինները միայՆ։ Թախտի ներքոյ, որպէս ապահով պահարանում,—դրուած էին ողՀմելի բնակչի ողՀմելի անտեսուԹեան անօԹՆերը։ Մի երկար կաւէ կաթ, լրբև վարագոյր, մեխած էր Թախտի առջևի կողմից, որը ծածկում էր Նրա տակում ածուած չքաւորը երեկՀՆՆերի ամօԹը այցելուի աչքից։

Թախտի Թերմաղ գորգի վրայ Նստած էր այրի կինը և, սպիտակ ակՆոցները Թելով կապած ունելով գլխի շորերին, կար էր կարում, ԹէՀ Նրա խաղը կարը ոչ աչքերի պէտք ունէը և ոչ ակՆոցՆերի։ Մեծ ասեղը ոսկրացած մատՆերի մէջ արագուԹեամբ շարժվում էր, և հատ դերձանով կարում էր տոպրակՆերը։

Չը նայելով ծայրայեղ աղքատուԹեանը, որ տիրում էր այդ խղճալի բնակարանում, դարձեալ ամեՆ մի առարկայի մէջ նշմարվում էր կարգ և մաքրուԹիւՆ։ Աղիւսեայ յատակը համարեա մաշուել էր աւելի տակ գործունէուԹեան ներքոյ։ Դաջով ծեփած պատերի վրա մի հիւրկի չուի վոշի չը կար։ Դուռը, յաճախ լուացուելով, բոլորովին կորցրել էր իւը Ներկը։ Երևում էր, որ անբախտ այրին մի ժամանակ ճաշակել էր աւելի բախտաւոր կեանքի վայելչուԹիւՆՆերը։ Նա, ևրևս, մի ժամանակ Նա իւը սեպհական տան տիկինն էր, շրջապատած ծառաՆերով ու աղախՆՆերով, բայց դառն հանգամանքները խլեցին Նրանից բոլորը. և նեռեցին այդ մԹին նկուղի մէջ։ Ամուսինն այրը մեռաւ կսկիծից, բարեկամՆերը հեռացան աղքատից, և մուացան աղքատին։

Նա Նստած էր լուսամուտի հանդէպ, շարունակում էր կարել։ Մրտաած ասպակինների մուայլ շողը ընկել էր մաշուած դէմքի վրա, և երևան էր հանում Նրա ախուր գծերը։ Նա կարում էր, և երբեմՆ Թախծալի աչքերը դարձնում էր դէպի դուռը, կարծես, սկիզՆ ապասելիս լինէը։ Իսկ երբեմՆ վեր էր կենում, մօտենում էր վոքրիկ կաԹսային, որը, բուխարու մէջ դրած, եփվում էր, և իւը խուլ, մեքանաձական չՆչիւՆով ընդհատում էր նկուղի խորին լռուԹիւՆը։

Նա դեռ շարունակում էր կարել, մինչեւ պատի ժամացոյցից քարշ ընկած ծանը շղԹաՆերը խշրտացին, վոքրիկ դըռնակը բացուեցաւ, երկարահասուց յոտլոը դուրս հանեց փետրազարդ գլուխը և, երեք անգամ դէպի ցած ու դէպի վեր բարձրացնելով, իւը Թոթով լեզուով ձայնարկեց երրորդ ժամը։

—Տէ՛ր Աստուած,—ձայն տուեց և տատապեալ այրին,—ինչ եղաւ, ինչո՞ւ այդքան ուշացաւ։

Այդ միջոցին դռները բացուեցան, սպասած անձնաւորուԹեան վոխարէՆ՝ ներս մտաւ մի այլ անձնաւորուԹիւՆ։ Նա կանգ առեց սեմքի մօտ, և սկսեց հետախոյզ աչքերով որոՆել տանտիկնոջը, որը, նկուղի մէջ սիրող մուայլի պատճառով հասարեա անտեսանելի էր։

—Ո՞վ ես, ինչ ես կամենում,—զարմանալով հարցրեց այրին։

Նկուղը ոչինչ չպատասխանեց, այլ տեսնելով Նրան լուսամուտի հանդէպ Նստած, ինքն ևս մօտեցաւ և լուռ Նստեց Թախտի մի ծայրում։

Անսպասելի այցելուի յանկարծակի յայտնուելը ոչ սակաւ խռովուԹիւՆ պատճառեց խեղճ այրին, որը, կարը մի կողմ դնելով, և ակՆոցները ճակատի վրայ քաշելով, սկսեց ապշած կերպով նայել Նրա վրա։

Բայց այցելուՆ երկար սպասել չը տուեց։ Գլխարկը առՆելուց և իւը ձեռքի գաւազանի գլխին դնելուց յետոյ, և գուՆաւոր Թաշկինակով ճակատ ճակատից քրտինքը սրբելուց յետոյ, մի քանի անգամ հազաց, կոկորդը մաքրեց, և ապա դարձաւ դէպի այրին, ասելով.

—Գնա՞ս ես ավ եմ, կամ ինչի՞ համար եմ եկել։ Ինձ կասեՆ Արտեմ Պետրովիչ, դու պէտք է լսած լինես իմ անունը։

Վերջին խօսքերը այնպիսի մի յանգով արտասանեց Նա, կարծես, ամեՆ ոք պարտաւոր էր՝ անպատճառ լսած լինել Արտեմ Պետրովիչի հռչակաւոր անունը։

—Չեմ լսել, պատասխանեց այրին։

—Ինչ հանգուցեալ ամուսինդ ամենամօտիկ բարեկամն էի,—շարունակեց Նա։—Աստուած լրան կեանք և արքայուԹիւՆ տայ, շատ լաւ մարդ էր լուսահոգին։ Կասէը. Արտեմ Պետրովիչ, դու էլ լաւ մարդ ես, այդ պատճառով սիրում եմ քեզ։ Է՛հ, ավ է մՆացել այդ անցաւոր աշխարհում . . . Նա գնաց, հանգըստացաւ . . . իսկ ես մՆացի . . .

Զգացմունքները խեղդեցին Նրան, գուՆաւոր Թաշկինակը տարաւ դէպի աչքերը, սկսեց դառն կերպով հեկեկալ։ Ամուսնի անունը լսելով, խեղճ կինը նոյնպէս զգացուեցաւ։

—Մի լաց լինիը, հոգուդ մատաղ, Ֆեթիւանն։ Աստուած ողորմած է,—ձայն տուեց Արտեմ Պետրովիչը, մխիԹարելով Նրան.—Շատը գնացել է, քիչն է մՆացել։ Կանցնեն սև օրերը, և շուտով քեզ համար էլ մի Ճար կը լինի։

Ֆեթիւանը վոքր ինչ հանգստացաւ։

Արտեմ Պետրովիչը վեր կացաւ Նստած տեղից, աւելի մոտեցաւ Նրան։

—Ինչ հանգուցեալ ամուսինը ինձ շատ լաւուԹիւՆՆեր է արել,—ասաց Նա մի առանձին ջերմեռանդուԹեամբ։—Ուզում եմ, որ Նրա երախտիքը հոգուս վրա պարտք չը մՆայ, ես էլ մի լաւուԹիւՆ անեմ։ Դրա համար եկայ քեզ մօտ, Ֆեթիւան։ (Խօսքը մեր մէջ մՆայ, Արտեմ Պետրովիչը երբէք ծանօԹուԹիւՆ չէ ունեցել Ֆեթիւանի հանգուցեալ ամուսնի հետ)։

Դժբախտ կինոջ դէմքը փոքր մնաց պարզուեցաւ։ Այդ առաջին անգամն էր, որ մի մարդ բաց էր անում նրա մոռացուած նկուղի դուռը և իւր կարեկցութիւնն էր արտայայտում։

—Առաջ չէր ասա, Բեթիւան, ինչպէս ես, ինչ ես ընում, ինչպէս է քո դրութիւնը։

—Տեսնում ես, Աբաեմ Պետրովիչ, էլ ուր ես հարցնում,—պատասխանեց այրին, ձեռքով ցոյց տալով իւր նկուղը։—Ահա այդ է իմ դրութիւնը։

—Տեսնում եմ . . . տեսնում եմ . . . կրկնեց Աբաեմ Պետրովիչը, գլուխը ցաւակցարար շարժելով։—Ո՞ւր է որդիդ, ինչ է ընում։

—Նեբսէկի շէօլումը կարզում է։

—Դու ինչ ես ընում։

—Աչուր ծախողների ու վոզդաշչիների համար մէշօկներ եմ կարում։

—Հասոն ինչ են տալիս։

—Մի կոպէկ։

—Լաւ, օրական քանի հատ պիտի կարես, որ հացի փող դուրս գայ։

—Վեցեր ու ցերեկ կարում եմ։ Օր լինում է, որ քսան հատ, երեսուն հատ կարում եմ։ Տգաս էլ տովորել է, օգնում է ինձ։

Աբաեմ Պետրովիչը կրկին գունատուր թաշկինակը տարաւ դէպի աչքերը և լսլատկեն ձայնով բացականչեց.

—Հն գնդի հա . . . ոմ կը մտածէը, որ Թիֆլիսի առաւաջնի պատուաւոր վաճառականն կինը սոխագործ պիտի լինի, մէշօկներ կարելով ապրել . . .

—Պատճով էլ ես շատ գոհ կը լինէի, Աբաեմ Պետրովիչ, եթէ մէկու կող տալն ինձ,—ասաց խեղճ կինը հոգուց հանելով։—Բայց շատ անգամ գնում եմ, և գլուխս դատ, ժամեր ամ կանգնում եմ վոզդաշչիի կանաչի դուռը, սպասում եմ, պաղատում եմ, ու էլի գալուկ չեմ դառնում։ Աղքատ կիները այնքան շատացել են, որ գործ չեն հասցնում մեզ։

—Ճշմարիտ է, շատ ճշմարիտ է, ժամանակները վատացել են, մարդկանց սրտում այլ ևս խղճմտանք չէ մնացել, Բեթիւան։ Դու շատ նեղութիւնների քաշեցիր, դու շատ տանջուեցար, Բեթիւան, Աստուած ապաշխարութիւն հասնի։ Բայց էլի ասում եմ քեզ, որ շարը գնացել է, քիչ է մնացել, կանցնեն այդ սև օրերը, և դու կրկին բախտաւորութիւն կը գտնես, Բեթիւան։

—Ինչով, ինչպէս, անհամբերութեամբ հարցրեց դժբախտ կինը։—Դէ ասա, էլ ուր ես չարչարում ինձ։

—Սպասիր, մի շտապիր, բոլորը կը պատմեմ, Բեթիւան,—հանգստութեամբ ասաց բախտաւորութեան աւետաբերը, և այս անգամ գունատուր թաշկինակը տարաւ դէպի իւր քիթը։

Աբաեմ Պետրովիչը տովորութիւն ունէր ամեն ինչ նոյ նահապետից սկսելու։ Նա պատմեց, թէ մի օր կանգնած էինք Թամաշօվի քարվանսարայի առջև, և Աղա-Պարոնօվի հետ „դէսից-դէնից“ խօսում էինք։ Փակագծի մէջ ակնարկեց, թէ Աղա-Պարոնօվը նրան շատ յարգում է, և միշտ կրկնում է. „Աբաեմ Պետրովիչ, դու լաւ մարդ ես“։ Այն ժամանակ, երբ կանգնած խօսում էինք, գալոշի աշակերտները դեռ նոր էին արձակուել, խումբ-խումբ անցնում էին։ Յարձակուել վոկզալի մէջ ակնարկեց, թէ Աղա-Պարոնօվը մի առանձին գումար ունի դէպի գալոշների աշակերտները, և միշտ նրա առաւտահնութեամբ օգնում է նրանց, բայց այդ շատերը չեն լմանում, գիտէ միայն Աբաեմ Պետրովիչը։ Աշակերտների խումբի մէջ տեսաւ նա մի պատառոտած և գլուխած տղայ, խոյն գումար չարժուեցաւ։ Այդ միջոցին դարձաւ Աբաեմ Պետրովիչին ասաց, որ լմանայ, թէ ռամ տղան է։ Աբաեմ Պետրովիչը վազ տուեց տղայի եանից, հարցրեց, տեղեկացաւ, որ Խօջաբաշեանի որդին է։ Հէնց որ լմացաւ Աբաեմ Պետրովիչը, աչքերը լցուեցան արտասուքով և նրա սիրտը „մէ Թաւուր էլաւ“։ Նկաւ Աղա-Պարոնօվին պատմեց, նա էլ հէնց որ լմացաւ, աչքերը լցուեցան արտասուքով, և նրա սիրտն էլ „մէ Թաւուր էլաւ“։ Գլուխը շարժեց ու ասաց. „Տեսնում ես, Աբաեմ Պետրովիչ, փուչ աշխարքի բանը, հէրը ինչ հալի էր, հիմա տղան ինչ հալի է“։ Ցետոյ աւելացրեց. „Դրա հէրը, Աբաեմ Պետրովիչ, ինձ հալրութիւն է արել, ես նրա դուքնումն եմ մեծացել ու նրա ձեռքովն եմ մարդ դարձել։ Պէտք է գնաս, Աբաեմ Պետրովիչ, որտեղ էլ որ լինի, պէտք է գտնես էս տղայի մօրը ու ասես. Թէ ինչպէս նրա մարդը ինձ մեծացրեց, հացի տէր դարձրեց, ես էլ պէտք է նրա տղին մեծացնեմ ու հացի տէր դարձնեմ, որ պարտական չը մնամ“։—Հիմա հասկացար, Բեթիւան, բանը ինչումն է։

—Հասկացայ . . . պատասխանեց դժբախտ այրին, և նրա ձայնը դողդողաց նեղքին վրդովմունքից։—Այդ ինչ Աղա-Պարոնօվ է,—հարցրեց նա, ուղիղ Աբաեմ Պետրովիչի երեսին նայելով։

—Հէրօրհնած, չ'ես ճանաչում. այն որ Սօլօլակում մեծ տներ ունի։

—Սօլօլակում շատերը մեծ տներ ունին։

—Տօ, ձեր դուքնի աշակերտը, Սերգէյ Եգորիչը։

—Փառք քեզ Աստուած,—բացականչեց զայրացած կինը։—Խնդրում Սաքուլը հիմա Աղա-Պարոնօվ է դարձել. „տղան“ բանւական չէր, „պարոնն էլ ոչինչ է կոլցրել . . .

Անցեալը իւր բոլոր զարհուրանքով նեղրկայացաւ խեղճ կնոջ առջև։ Յիշեց, որ Թաւուր Սօլօլակում մեծ տներ ունեցող Աղա-Պարոնօվը մի ժամանակ իւր ամուսնի լաճուրեի աշակերտն է եղել։ Յիշեց, Թէ ինչպէս ամեն օր ճաշին գալիս էր նա, և ուտելու „բաժին“ էր տանում իւր ամուսնի լաճուրէին։ Յիշեց, Թէ ինչպէս մի անգամ սաստիկ ծեծեց նրան, լոշտանոցից աջ-ձախ հայհոյել գողանալու համար։ Յիշեց, Թէ ինչպէս ինքը բաղանիք գնալու ժամանակ, նա գալիս էր, վեր էր առնում բաղանիքի „բողչան“, և իւր հետից ընկած, քարշ էր գալիս մինչև բաղանիքները, մինչև ինքը լուացվում էր։ Յիշեց, Թէ ինչպէս լոշտանոցի փոքրիկ գողը, նրանց տան փղրանքներով մեծանալով, և հետզհետէ զարգանալով, վերջապէս գարձաւ իւր ամուսնի լաճուրեի աւազակը։—Այդ բոլորը յիշեց նա և, դառնալով դէպի միջնորդը, ասաց.

—Ներքնաիալ եմ, Աբաեմ Պետրովիչ, որ Աղա-Պարոնօվը ցանկանում է իմ որդուն նոյն հայրութիւնը անել, ինչ որ արել է իմ հանգուցեալ ամուսինը նրան, երբ նա ինձ նման մի ափքաո մօր որդի էր։ Բայց ես արդէն սովորել եմ այդ դառն վիճակին, և եթէ քաղցածութիւնից մեռնելու էս լինի, գարձեալ ձեռք չէի մեկնիլ այն մարդուն, որ իմ դժբախտ ամուսնի կորճանման սրտճաւը գարձաւ . . .

—Այդ ինչ ես ասում, Բեթիւան,—ձայն տուեց Աբաեմ Պետրովիչը, զարմացած ձևանալով։—Այդպէս մի խօսիր, Բեթիւան, հոգուդ մեղք մի արա, Սերգէյ Եգորիչը քո ասած մարդը չէ։

—Սեւիլ վատն է. Աբաեմ Պետրովիչ, նա իւր բարերարի ընտանիքը ձգեց այդ խոնաւ, մթին նկուղի մէջ, իսկ ինքը նրա փողերով մեծ տներ շինել տուեց իւր համար։

—Սխալ ես հասկացել, Բեթիւան, այդպէս չէ, հոգիս վկայ, այդպէս չէ։

—Այդպէս է, Աբաեմ Պետրովիչ, ես վերջը բոլորը լմացայ . . . բոլորը հասկացայ . . . բայց այն ժամանակ բանը բանից անցել էր . . .

Տիկինը պատմեց, Թէ գալմանում, է որ Աբաեմ Պետրովիչը չը գիտէ այն բոլոր ցաւալի կրոտութիւնները, որ չաոերին յայտնի է։ Երբ իւր ամուսնի գործերը վատ գնացին, նա ընկաւ մի տեսակ կիսացնոր տրամադրութեան մէջ։ Իւր գործերի դէբութիւնը ծանրանում էր նա Թէ իւր կինոջից և Թէ բարեկամներից։ Խորհրդակցում էր միայն Սերգէյ Եագօրիչի հետ, որը նրա գլխաւոր գործակատարը և, մի և նոյն ժամանակ, մտերիմն էր։ Այդ լորամանկը, օգուտ քաղելով իւր „լազէնկի“ դրու-

Թիւնից, և նրա կայքը միւս պատրաստէրներից ազատելու խոստմունքով, սկսեց սուտ վէքսիլները առնել նրանից, և բանը այնտեղ հասցրեց, որ ամբողջ խանութը իւր անունով դարձրեց։ Երբ ամուսինը բոլորովին խելագարուեցաւ, երբ նրան հիւանդանոց տարան և այնտեղ մեռաւ, այդ ժամանակ խարերան տիրեց նրա բոլոր կայքերին, և նրա ընտանիքը մի կտոր հացի կսկծա թողեց . . .

—Ախար, Քեթիւան, այդ ամենը սուտով եղաւ, գործը դատաստանի ընկաւ,—ընդհատեց Արտեմ Պետրովիչը։

—Ճշմարիտ է, սուտով եղաւ, գործը դատաստանի ընկաւ, —պատասխանեց խեղճ կինը վշտացած ձայնով։—Բայց ով պիտի պաշտպաներ անտէր մնացած ընտանիքի շահերը։ Մեր ձեռքում մի կօպեկ անգամ չէը մնացել վաստաբաններին վճարելու համար։ Ամեն ինչ նրա ձեռքումն էր, և նա իւր բանը չնեց, գործը տարաւ . . .

Այդ միջոցին նկուղի դռները շատ ժամ էին դնացին, տուրը խօսակցութիւնը ընդհատուեցաւ։ Ներս մտաւ մի պատանի, որ ուսին շալակած ունէր մի քանի թոն հատ կտաւ-

Արտեմ Պետրովիչը նկատեց, որ իւր ներկայութիւնը այժմ աւելորդ է, և դեռ չուստահատուած իւր անյաջող պատգամաւորութիւնից, մտածեց՝ գործը թողնել մի ուրիշ աւելի յարմար ժամանակի։

—Մնաս բարով, Քեթիւան,—ասաց նա տեղից վեր կենալով, և մի քանի անգամ գլուխը շարժելով։—Ես դարձեալ կը գամ քեզ մօտ, դարձեալ կը խօսենք այդ մասին . . .

Քեթիւանը ոչինչ չը պատասխանեց։

Նրա հեռանալուց յետոյ Նիկիտը հարցրեց.

—Ո՞վ էր այդ մարդը։

—Սատանան ոչ գիտէ՞ Նրա գլուխը . . . պատասխանեց մայրը բարկացած կերպով։

Այնուհետև, որ Արտեմ Պետրովիչը չայտնուեցաւ, այրի Քեթիւանի նկուղում, անցել էր ուղիղ ամիս։ Ձիւնը խոշոր պատառներով թափվում էր երկնքից և խկոյն հալվում էր։ Եղանակը տխուր էր և անախորժ։ Փողոցներում կուտակուած ցեխի պատճառով մարդիկ դժուարութեամբ կարողանում էին անցուդարձ անել։

—Ախար, Քեթիւան, այդ ամենը սուտով եղաւ, գործը դատաստանի ընկաւ,—ընդհատեց Արտեմ Պետրովիչը։

Նեը, որոնց հետ կապել էը և նրը դպրոցական գրքերը։ Նա նրը ծանր բեռը զգուշութեամբ մի կողմ դրեց, և սկսեց քրտինքը սրբել կարմրած երեսից։

—Ինչո՞ւ այդքան ուշացար, Նիկիտ,—հարցրեց մայրը։

—Գնացի դրանք բերելու,—ցոյց տուեց որդին կտաւի թոները, որ ուսերի՞ն կարելու համար էը բերել։—Վախից որտեղից, Շապկեովի քարվանսարայից։ Ինձ ասացին, գնա այնտեղից տար։ Մինչև բերեցի, հոգիս դուրս եկաւ, շատ հեռու է։

Մայրը բոլորովին մոռացել էը, որ առաւօտեան պատուիրեց որդուն, որ դպրոցից արձակուելուց յետոյ, գնայ կտաւատուի գրասենեակը, և կարելու համար նոր կտաւներ խնդրէ։

—Դէ՛ այն նատը, հանգստացիր, ես խկոյն ճաշը կը պատրաստեմ,—ասաց մայրը, վեր կենալով և մօտենալով բուխարու մէջ եխուող փոքրիկ կաթսային։

Այդ միջոցին չորս մշակներ դուրս էին տանում մի դագաղ, մի անզարդ, չքաւոր դագաղ։ Գահլանան լուռ հետևում էը նրան, խմբ պատանի Նիկիտը լաց էը լինում։

Հարևաններից մի քանիսը բաց արին սենեակների լուսամուտները, նայեցին, և դարձեալ չուտով կողպեցին, ասելով միմեանց։

—Դա այն խեղճ այրին էը, որ մեռաւ ցրտից ու քաղցից . . .

(Կըշարունակի)

ԱՆՏԻՐԱԿԱՆ

*Ընթացութիւնն երկրի բեռնաւորի
եւ բանաք յոգիս ամենի զդա:
Քիւսես*

Ձիւն է գալիս, ցուրտը փչում,
Կրծկատած եմ անկիւնում՝
Ըսպասելով ողորմողին,
Բայց նա գնում է իւր ուղին:

Ինծ ասել են ամէն անգամ,
—Եղիր, մանուկ, համբերող.
Ողորմութիւնն աստուածական
Բարեաց կ'լինի քեզ տրւող:

Ըսպասեցի, աղօթեցի,
Ձիւնն է գալիս արդ գըլխիս.
Անտիրական, անօգնական,
Աւար մնացի սեւ օրիս:

Է՞լ ըսպասեմ, ով յուսացողը,
Մանաւանդ ինձ խոստացողը.
Ձայն չէք տալիս, անց էք կենում,
Ամօթահար գուշակողը:

Թէ հաճոյ է՝ տեսէք դուք արդ,
Արտասուքներս եմ ուտում.
Աստւածածարան դուք մարդիկ էք,
Սրան էլ անշուշտ կայ լուծում:

Կ'ասէք, անշուշտ.—հարանց մեղքը
Խընդրւում է եօթ պորտէն.—
Եւ այդպէսով, ծեր մեծ խելքով
Մեղքը թափում էք ծեզնէն:

Անցէք, անցէք, ով տգէ՛ներ,
Միամտութեամբ մնուողներ,
Ձեզ լսելով իբաւ ինծնում
Պատրժւում են իմ հայրեր:

Այս լեզուս էլ դուք հետեւութիւն
Համարում էք ա՛լ քէն.
Անցէ՛ք, ազատ արէ՛ք դուք ինծ
Ձեզնէ ու ձեր աստուածէն:

Քե՛զ եմ դիմում, Դու, ի՛սկ Աստուած,
Որ ինծ կեանքն ու կամք տըւիր,
Եւ կեանքն յաւէտ ինծ վաստակել
Գործով միայն ուսուցիր:

Երթանք, անձն իմ, թող այս անկիւն,
Երթանք անգամ այս բըրով.
Երթանք բախել բախտի դուռը,
Բռնադատւենք մեր ուժով:

Հոկտ. 1881 Ա. Մ. Ե. Պ.

—

ՀԱԺԱՆՈՒԹԻՒՆ

1.

—Համբօ, լսե՞լ ես, մեր աղէքը բաժանւում են.—ասում է Ծառաններից մէկը միւսին, սրահը ցախաւելով ուղեղիս, եւ մի եւ նոյն ժամանակ աւելի կոշիը դիմդհար է տալիս ծնօտի տակ։ Իսկ միւս Ծառան, որ Թիռով էր քերում, Թիռակի-կոշիկ վրայ է կըշինում եւ իբը զարմացած՝ ասում է.

—Բաժանվում ե՞ն . . . ասում ես բաժանւում ե՞ն . . . յետո՛յ.

—Էլ ի՞նչ յետոյ, բաժանւում են էլի՛։

—Բաժանւում ե՞ն . . . հը՛մ . . .

—Դու ո՞ւմ մօտ կը մնաս որ բաժանուին, Համբօ.

—Ե-է՞ս, Արշին.

—Հա՛, դու, Համբօ։

—Ես ո՞ւմ մօտ կը մնամ, ասում ե՞ս.

—Հա՛, դու որի՛ մօտ կը մնաս. էլ քոնի՛ հարցնես, խուլ խօս չե՞ս . . .

—Ախըր մէկ կաց մի՛տք անեմ էլ, օ՛րհնւած, ի՞նչ ես ըզտտալում։ Որի մօտ կը մնա՞մ . . . դու ի՞նչ կասես. որի՛ մօտ մնամ որ լաւ լինի։ Բայց, սպասի՛ր։ Դու ինքդ որի՛ մօտ կը մընաս։

—Ե-է՞ս

—Հրամեցէս, դու ինքդ։

—Առաջ դո՛ւ ասա, ես եմ հարցրել առաջ։

—Չէ՛, դո՛ւ ասա։

—Չէ՛, ես ոչինչ չեմ ասել։

—Ինչո՞ւ չես ասել։

—Էնդուր չեմ ասել, որ եթէ՛ Նրանցից մէկին լմնանայ, որ ես իրան չեմ ուզում, կաշխս կըմաշվի։ Ինչի՞ս է պէտք։ Բայց գիտե՞ս, մեր բանը շատ վատ կը լինի, եթէ՛ բաժանուին։

—Ինչո՞ւ։

—Նրա համար որ՝ հիմա ոչ մէկի սիրտը չի ցաւում. հօրական աշխատանքի վրայ են նստած. ուտող ուտողի է, Թափող Թափողի։ Բայց երբ որ բաժանուին, ամեն մէկին իր ունեցածի վրայ կըդողդողայ, մեր բերանները էլ աւելի պատառ չի ընկնիլ։

—Ռո խելքն այդպէս է կտրում։ Ինձ որ հարցնես, որ բաժանուին, մեզ համար լաւ կը լինի։

—Ի՞նչպէս։

—Այնպէս որ, հիմա չորս եղբայր են, չորս էլ կնիկ ունին, մի քանի չորս տղայ կայ, մի քանի չորս էլ աղջիկ. խելի համբո՞ւ ես, գիտե՞ս քանի հոգի են։ Հիմա դրանց եկող-գնացողը հաշւիր։ Ի՞նչ տուն,—քարվանսարայ է. մարդ՝ որ մէկին ծառայէ. ամենքն էլ հրամայող են մեծից մինչև փոքրը։ Բայց երբ որ մէկը կը լինի, մեր ծառայութիւնը կը թեթևանայ։

—Չէ, այդքան տղէքը, այդքան աղջկէքն ու հարսները, չորս տղամարդ էլ հետները, ամենքն էլ բան շինող են։ Այնքան բան չը կայ, ինչքան բան շինող։ Բայց երբ որ բաժանուին, բան շինողները կը քչանան, այն ժամանակ մեր բանն էլ կը ծանրանայ։

—Ղորդ է, բան շինողները կը քչանան, բայց չէ՞ որ շինելու բանն էլ կը քչանայ։ Հիմա ինչքան որ այգի ունին, ամեն մէկին նրա քառորդը կընկնի. հողերի՝ նոյնպէս քառորդը։ Մըրթէ մեւնոյն է այժմեան ահագին այգին մշակել, թէ՞ նրա չորս բաժնից մէկը. քանո օրավար վարել, ցանե՞լ, թէ՞ հնձե։

—Համբօ, դու շատ լիմար ես. քո խելքը ոչինչ չի կըտրում։ Այդ մարդկանցից ամեն մէկը մի ամբողջ է, բայց միասին լինելով՝ ծուլութիւն են անում։ Երբ որ բաժնուին, ամեն մէկին աշխատելու է աւելի ունենալ, քան թէ միասին եղած ժամանակ։ Շատ սովոր մարդը, երբ որ գլխումն էլ խելք կայ, ձեռքումն ուժ, քշով ինչի՞ կը բաւականանայ. Ամեն մէկին իր համար մի առանձին սարայ պիտի շինի, մի ջոկ ամարաթ.

Ա. Գ. ՐՈՒԲԻՆՇՏԵՅՆ

հիմա գոմ ասա, կալ ասա, մարագ ասա. նոր այգի պիտի գցի, նոր խոտհատ պիտի բաց անի, ով գիտէ՝ էլի լինելը պէտք է շինի, ինչ որ հիմա չի կարող, որովհետև հիմա խօսքները մէկ չի գալիս. մէկը դէսն է քաշում, մեւսը դէն. սէր, մեւթարանութիւն չկայ։ Ամեն մէկն ուզում է հանգիստ ապրել, ջանին ջահել չի տալիս. շինելու բանն իրար վրայ են գցում, քեզ նման բանից փախչում։ Ես որ նրանց տեղ լինեմ, քեզ հացասիրտ էլ չեմ պահի։ Գնա ձին տար ջուրը, գնա, ինչ քո խելքի բանն է։

—Ինչո՞ւ դո՛ւ չես ձին տանում ջուրը. առաւօտը ես եմ տարել, հիմա էլ դո՛ւ տար. բանը նօբաթով կանեն. դու էլ խօսի իմ ազան չէս, որ հրամայում ես։

—Գնա ասում եմ, թէ չէ՝ տեսնում ես այս ցախաւելը. այնպէս կը հասցնեմ գլխիդ, որ...

—Աբա խլինը. խլինը էլի, խլինը։

—Ա՛յ թէ չեմ խլիլ...

—Ա՛հ թէ կը խլես...

—Ա՛հ թէ չեմ խլիլ...

—Ա՛յ թէ կըխլես...

Այսպէս՝ ծառաները քաղցը ղրոյցից չեասյ, երբ բանը հասաւ գործ կատարելուն, յանկարծ սկսեցին իրար բերան կրծել և իրար հարւածել։ Այս տուրուդմփոցի ժամանակ վրայ հասաւ աղանեղից մէկը մի հիւրի հետ, և ասաց բարկանալով—

—Ի՞նչ էք անում, այ տղէք. այս ինչ բան է։

Ծառաները հեռացան, օձիքները գցլատած։

—Ահա մեր տան, մեր կեցուԹեան պատկերը,—ասաց աղան իր հիւրին—ինչ որ բաժանուԹեան խօսք ու ղրոյց է եղել մեր տան մէջ, էլ ոչ մի օր հանգիստ չունենք։ Ցղբարքս իրար հետ են կռւում, մեր կնանիքն իրար հետ, երեխէքն ու ծառաները իրար հետ։ Կըհատատմաս, որ ասեմ մեր շներն ու տաւարները էլ են սկսել կռւել իրար հետ. կարծես բաժանուԹեան հոտն առած լինին։ Մէկ խօսքով՝ կռիւը, ծեծը, խռովուԹիւնը մեր տան մէջ դառել է մի վարակիչ հիւանդուԹիւն։ Մեծ երկիւղ ունեմ, որ սրընթաց վերջանայ այս ամենը, որովհետև շատ խռոված և անհանգիստ է հոգիս, սրան ԹրԹռոց և քննատուԹիւնն է եկել վրաս. ոչ մէկին բան հասկացնել չի լինում, կարծես կախարդած լինին, կարծես մի նզովք, մի անէծք կայ մեզ վրայ, և պիտի կատարւի . . .

—Ես զարմանում եմ, ասաց հիւրը։ Ձեր տունը միշտ եղել է մի օրինակելի գերդաստան։ Ձորս եղբայր էք, չորսդ էլ ուսում առած, կրԹուած, պատուաւոր ծնողաց որդիք, անւան և համբաւի տէր։ Իմ հաւատալս չի գալիս քո ասածը։ Ուրիշներին էլ դուք էք նորատում, այդ ինչպէս է, որ ինքներդ իրար հետ կռիւ էք հասկանում։

—Եղբայր, գիտես ինչ է. ամեն մի աման այնքան կը տանի, ինչքան որ իր ծաւալն է. եԹէ մի փոքր աւել ածես, կը Թափւի անշուշտ։ Դու հիմա ասա՝ Թէ ամանը որ արծաԹի լինի, շատ կըտանի. այդ ինչպէս կարելի է։ Մենք հիմա այնքան շատացել ենք, որ մի տան, մի սուկսի վրայ չենք տեղաւորւում. մէկն ուտում է, մեւսը քաղցած մնում. ինչպէս կասեն՝ ով չուտա, նա կուշտ։ Մէկն ասում է՝ քո երեխի բաժինը շատ է, խնձոր քիչ. լաւ պատառները քո մարդին ես ուտեցնում։ Մէկը բեղրել է շատ հաց Թխելուց, մէկէլի կռների ցաւը բռնում է, երբ խմոր հունցելու նօբաԹն իրան է հասնում։ Նրբ որ տան մէջ ես ու դու էլաւ, իմ ու քու էլաւ, էլ այն տանն ինչ համ պիտի լինի։ Շարունակ քրԹմնջիւն, շարունակ դանգատ։ Գլխներով շաքար ենք առնում, մի շարաԹ չանցած, հալւում է, էլ մի դեղապէս պահել չի լինում, մարդ հիւրերի մօտ էլ է մնում սևերես։ Ի՞նչ հասկացնես անիրաւի ու ոգէտ կանանց, երես առած դաւեհիլ երեխաներց, որոնցից ամեն մէկը իր մօր անիրաւուԹեան պատկերն է կրում։

Այս միջոցին տան վերի յարկում սարսափելի աղաղակներ լսեցան։ Վեր բարձրացան տեսան, որ մեծ ու փոքր տէրտիկնանիքը իրար մազերից են բռնել քաշքշում, նրանց մարդիկն էլ իրար օձիքից։ Պատճառը եղել էր այն, որ մեծի երեխան ծեծել էր փոքրի երեխային, սրա մայրն էլ ծեծող երեխային, ծեծողի մայրն էլ նրա մազերից էր բռնել, նա էլ նրա, և այսպէս բարձրացել էր մի ահագին աղմուկ։ Մեւս տեղից դուրս էին եկել նրանց մարդիկը և կռւին միջամտելով իրար օձիքից բռնել. տան բոլոր երեխայքը վայնասուն էին բարձրացրել։ Մեւս երկու եղբայրները հազիւ կարողացան անջատել նրանց միմեանցից։ Սրա վրայ բոլոր դրացիները հաւաքւեցան հանդիստացնելու և ամենքն էլ շատ ուրախացան և մեծ հաճոյք զգացին այս տեսարանից։

2.

Վայրենիաց գլխի գործողուԹիւնը կատարւում էր մի մեծ աւանում, որ իսկապէս ոչ գիւղ էր, ոչ քաղաք, այլ երկուսից մի խառնուրդ, մի գիւղաքաղաք։ Այդտեղ մի և նոյն գերդաստանի անդամները և երկրագործ էին և այգեգործ, և արհեստաւոր էին և վաճառականք, և ուսում առած կրԹուած էին և անուս գեհեներ։ Այսպիսի մի գիւղաքաղաք է Թիֆլիսից մօտիկ, Շուլաւերը, ուր կայ գաւառապետ և հաշտարար դատաւոր, հեռագրատուն և փոստատուն. ուր ինչպէս հոյակապ աներն ու նահապետական խրճիԹներն են միախառնւած, այնպէս էլ մօրԹալ վիսկիներ ու մօգնի շլապկեր, և այս՝ մի և նոյն տան մէջ։ Այո՛, մի և նոյն տան մէջ դուք կը տեսնէք ազա Մամմադ խանին, վարանցովի և շլեսան Դօնդուկովի ժամանակի տարազով հագուստներ։ Ես օրինակ բերի Շուլաւերը, բայց մեր վիպագրական գործողուԹիւնը այլ գիւղաքաղաքում էր կատարւում։

Բաժանուղները չորս եղբայր էին։ Նրանք փիզիքական զարգացմամբ, դէմքով և հասակով իրար նման էին. քիչ Թէ շատ նման էին և բնաւորուԹեամբ. առհասարակ նման էին այն բաներով, որոնք ժառանգաբար ծնողներից որդոցն են անցնում, Թէև մէկին մէջ նըւազ և մեւսի մէջ աւելի, մէկին մէջ՝ կրԹուԹեան ազդեցուԹեամբ՝ վսեմասած, մեւսի մէջ՝ անկրԹուԹեան շնորհիւ՝ պարզ ու անարատ մնացած։ Բայց նման էին մտաւոր զարգացմամբ։ Ամենից փոքրը՝ Տիգրանը՝ սանձարձակ արմատական էր. նրանից մեծը՝ Աբշալը՝ աւելի փորձառու էր և ձանձրանում էր իր չափը. սրանից մեծը՝ Սմբատը՝ ամենից զբաղցածն էր, և իր հեղինակուԹեամբ ապդեցուԹիւն ունէը առաջին երկուսի վրայ. սրանից և ամենից էլ մեծը՝ Աւագը՝ հին գաղտնարկի մարդ էր։

Աւագն ու Սմբատը արդէն տարիքով մարդիկ էին, մէկը 55 և մեւսը 50 տարեկան։ Դեռ մեւս երկուսը չեղած, սրանք մեծացել էին միասին, բայց այնպէս, ինչպէս Յակորն ու Նսաւը. մէկին հայրն է եղել սկզբում և մեւսին՝ մայրը. մօր սկզբածը յառաջ էր գնացել, հօր սկզբածը յետ մնացել, և այս պատճառով ինչքան Սմբատը սկզբում էր Աւագին, Աւագը երբէք սկզբ նման չէր ցոյց տալիս։ Նա մանկուԹեան նախանձը շարունակում էր և հասակն առած ժամանակ։ Նըրօր յառաջադիմուԹիւնը նրան չէր ուրախացնում, այլ ախրեցնում էր, մանաւանդ որ վերջին-վերջոյ հայրն էլ Սմբատին էր սկսել և օրհնուԹիւնը նրան էր տալ։ ԵԹէ աւելացնենք սրա վրայ, որ գրբացն էլ ասել էր Աւագին, Թէ քո եղբօրից քեզ օգուտ չըկայ, բայց վնասից, կարող ենք արդէն երևակայել, Թէ այս բոլորը մի նախապատրաստած մարդու վրայ ինչ ազդեցուԹիւն կանէ։

Պատասխանքով՝ Աւագը երկրագործ էր, իր գործանի մարճը չէր բաց Թողում, և միշտ ասում էր—Ես որ չըլինիմ, դուք բոլորդ քաղցած կըկոտորւիք։ Աբշալը այգին էր մշակում և արագ ու գինի պատրաստում։ Սրա պատասխանքն աւելի սրընթաց էր, տարեկան երկու հազար մանէԹի արագ ու գինի էր ծախում, բայց սա չէր ասում, որ այդ իր աշխատանքն է։ Տիգրանը ամենից փոքրը լինելով՝ մանկուԹիւնից երես տրւած էր. սկզբում էր աւելի ազատ կեանք վարել, „մէկ ուտում էր, ղաղ ման գալիս“։ Սրա սկզբած զբաղմունքը որսորդուԹիւնն էր։

Շատ չնորհալի տակառագործ էր, սիրում էր և մեզ աջուծուծուլթիւն նորագոյն ձևով. ինքն էր չինում փեթակները էլ շրջանակներով։ Բայց շատ չէր աշխատում, այլ գործ էր դնում այդ արհեստը իր զարճուրթեան համար միայն։ Այսու ամենայնիւ տան համար պէտք եղած բոլոր տակառները ու չանները ինքն էր չինում։ Սմբատը մեր Թախտաւարան բայց ընդունակ և արդէն հեղինակուրթիւն ձեռք բերած վարժապետներից մէկն էր։ Սա ինքն էր կրթել իր երկու փոքր եղբայրներին։ Նրանց ուսում տալուց յետոյ արձել էր և արհեստի։ Արշակը, որ նոյնպէս գիտէր Տիգրանի արհեստը և ամենից աշխատասէրն էր և եռանդուոր, մեզ օգնում էր Տիգրանին և երբ սա գործը կիսատ թողնելով՝ որսի էր գնում, բանը մնում էր Արշակի վզին։

Տիգրանը չէր հաշտւում եզան ու գոմշի հետ. ես ձի պէտք է բանացնեմ, ասում էր։ Նա սկսեց ձիան առնել, սայլի տեղ սկսեց փուրգօն բանեցնել։ Այսպէս մեզնոյն տան մէջ և փուրգօն էին բանեցնում և սայլ, և գոմէշ լծում և ձի։ Մեծը չէր հաշտւում ձիանց հետ և վնասակար ու շռայլուրթիւն էր համարում, չէր ուզում ձեռք վերցնել իր գոմշից. փոքրն էլ, սրա հակառակ, ուզում էր ամբողջ գիւղի սովորուրթիւնը փոխել։

Սմբատը նորուրթեան բարեկամ լինելով՝ փոքրին էր պաշտպանում և խրախուսում, բայց մեծին հնուրթիւնից ձեռք վերցնել տալ չէր կարողանում։ Այս հնի և նորի խառնուրդը տնտեսական վնաս էր հասցնում տանը, բայց հնաը չըկար գրա առաջքն առնելու։ Մեծը, ուզենալ էլ, կարող չէր ձի բանեցնել. դրա համար մեծ ջանք, մեծ ծառայուրթիւն էր պահանջւում, իսկ նա սովոր էր դանդաղ ու հանգիստ գործելու։ Նոր գուրթանի հետ չէր հաշտւում, որովհետև գուրթան չինելում իրան հմուտ վարպետ էր համարում։ Իսկ փոքրը նրան չէր նայում, և նոր գուրթան էր բանեցնում իր ձեռով։

Այսպիսի մի աններդաշնակ խառնուրդ էին ներկայացնում և նրանց կանայքը։ Նրանց մէջ կային երես փոխածածաններ ու երեսբացները, ինչպէս կային չհոսքանները և խոստղները։ Մէկը մշակուրթիւն էր անում՝ ջուր կրում, լմոր հունցում, հաց թխում, լուսցք անում, կերակուր եփում, տղամարդկանց օգնում կալ ու կուտի ժամանակ, կով կրթում, լոնոցի հարում, հաւ պահում, մեղր բանիւ ամեն բան, ինչ որ մեր ժրագլուխ տատերն արել են նրանց ջահրայից սկսած և գուլբայով վերջացրած, իսկ մեսը Նրան ձախ ձեռով էր օգնում. երրորդը ձախն էլ չէր բանի մտածեցնում, այլ միայն իր երեխաներն էր զուգում, զարդարում. չորրորդը կալ ու ձև էր անում ամենի համար, ամենի սիրտը չահում, որ իր վրայ չբխոսեն, բայց ընդհանուր առմամբ ամենքն էլ ծույլ էին, ամենքն էլ սիրտ-պակաս. չըկար գործ արդար բաժանմունք, չըկար ներքին կարգ ու կանոն, աւլոյ, սրբոյ, մաքրոյ, տուն ու տեղը կարգի բերոյ։ Այս մեւնոյն խայտաբղէտուրթիւնը երևում էր և երեխանց մէջ՝ թէ հագուստի կողմից և թէ կրթուրթեան։

Այսպէս չէր այս տունը, քանի որ կենդանի էր այս տան տիրուհին՝ լուսահոգի Նիկոտրէմի խանումը. հէնց որ նա մեռաւ, Նրանից յետոյ տան տէրն էլ՝ Յերունի Օհանէս աղան երկար չսալրեց։ Բայց սա աչքովը տեսաւ իր տան անկարգուրթիւնը և վշտացած սրտով մտաւ գերեզմանե*։

Դ. ԱՂԱՅԵԱՆՑ

(Կըշարունակուի)

* Վէպիս 2-ր գլխից 4-ր տողում փոխանակ միսթաղրամի գործադրուրթիւնը պէտք է լինի՝ միսթաղրամնման։

ԻՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՕՐԻՈՐԻ ՅՈՒՍԻԿԵՆՆԵՆ

Ա.

Իմ ամենեան եւ անփոխարինելի,

Երեքշաբթի երեկոյեն թէեւ հրաժեշտ տուի քեզ այգիում, բայց յուսով էի մինչեւ մեկնելս մի անգամ էլ տեսնել քեզ, կրկին նայել այդ քնքուշ երեսիդ, այդ հեզ աչերիդ. սակայն յուսաբեկ՝ ուրբաթ առաւօտ ուղի ընկայ։ Սրընթաց ձիանները սլացան, իսկ ես մտորում էի հազար ու մի երեւակայութեամբ։

—Չը՞, ի՞նչ է պատահել քեզ,—Դուշէթի մօտ Մարուկը ընդհատեց մեր լռութիւնը։

—Է՛հ, Մարուկ-Ջան, ինչ մեղքս պահեմ, սիրահարած եմ, եւ, հաւատա, որ ասածս էլ հատակ չէ։

Այս խօսքիս վրայ ուղեկցուհիներիս աղախինը, որ մի գեղեցկադէմ ռուս օրիորդ էր, մի խոր հառաչանք քաշեց։

—Դուք դու է՞ք, Նատաշա (այսպէս էր աղախնի անունը), նոյնպէս սիրահարած ես, հարցրի ես։

Նա անկարող եղաւ թաքցնել իր վիշտը ու այդ ամօթխած օրիորդը, որ շատ հազւագիւտ է ռուս աղախինների մէջ, աչքերը կրակով լցուած, յուզուած եւ արտատրուի պատմեց իր սիրոյ տխուր արկածը։ Այստեղ պարզուեց իմ վաղուց նրա մասին կազմած ենթադրութիւնը, որ նա հասարակ աղախիններից չէ, այլ մի տարաբախտ աղջիկ, որ ձգել է իր տօր շէն օջախը եւ հետու հարաւը եկել պանդխտութեան, որ դաժան աշխատանքով վերջ տայ իր կեանքին եւ գոնէ օր առաջ սլանայ երկինք եւ այնտեղ պաակւի իր Պետիայի հետ։ Փոստի կառքը ամբողջապէս մենք էինք բռնել, ներսը Հեղիկը, Մարուկը, փոքրիկ Սօլիկը, Նատաշան եւ ես, իսկ Նիկիտը դուրսն էր նստել կառապանի հետ։

Քեզ հետ նկարագրում, Թիֆլիս-Վլադիկաւկասեան ճանապարհի գեղեցկութիւնը, հակայ լեռները, ժայռերը, զեղեցիկ Ալագան, հալարտ Ղազբէկը, անյաւատակ անդունդները, քանի որ դու էլ անցել ես այս տեղով եւ ինքդ էլ զմայլել ես այս վիհ տեսարանով։ Բայց այս ճանապարհով անցնելիս յիշեցի հրծնական տխուր աւանդութիւնը, նազելի Դեսդեմոնան, իր փեսացու Սեւ-Հիւսէրը եւ նախանձոտ հարբ Լեռնային Ոզին։ Բայց չէ, հոգիս, ես հեռ տատանւում քո սիրոյ մասին, ես գիտեմ՝ որ քո սէրը ամուր է քան այս վիթխարի ժայռերը, աւելի անսասան է եւ մարդու, քան Ջրի-Կոյսի մարգարտանման արտասուքով շաղախուած Արագած. . .

Գիշերը Մէլէտում իջեւանեցինք։ Իսկ առաւօտը կանուխ մեր ճանապարհը շարունակեցինք եւ կէսօրից յետոյ ժամը 5-ին հասանք Վլադիկաւկաս։ Նոյն հիւրանոցներից իբր թէ ամենալաւը Լօնդօն հիւրանոցն էր քուլւարի հանդէպ. այստեղ էլ իջեւանեցինք, լուացուեցինք, հայ խմեցինք եւ դուրս եկանք զբօսնելու զեղեցիկ եւ ընդարձակ քուլւարում։ Տների մեծ մասը այստեղ մի յարկանի են եւ փայտից, փողոցները լայն, լաւ խանութներ կան։ Քաղաքը ուրախ տրամադրութեան մէջ է շնորհիւ շարունակ այստեղ ապրող զբնուորականների։ Գեղեցիկ երեկոյ էր եւ մեծ բազմութիւն ճեմում էր քուլւարում։ Մենք էլ մի քանի խանութ մտանք մի տեղ բաղդատելիք, միւս տեղ Սօլիկի համար խաղալիքներ առնելով վերադարձանք տուն։

*Միւս առաւօտ ժամը 8 ½ թողինք Վլադիկաւկազը եւ ժամը 2-ին կէսօրից յետոյ հասանք Միներալնի իջեւանը։ Այստեղ մերոնք ինձանից բաժանուեցին դէպի Պիտլոխօռսկ, իսկ ես շարունակեցի ճանապարհս ուղիղ։ Մարուկը մինուռն բարեւ առնելիս, երդւեցրեց ինձ ուրախ լինել, իսկ վշտահար Նատաշան, արտատուքը աչերին, ինձն իրան գասլելով՝ ասաց, „Դադօ-Լեոն Հանձար, Տէր իմ, որ երջանիկ լինիք“. . . Եւ մինչեւ նրա խօսքի աւարտելը տուեց շրջուն եւ մեր գնացքը սլացաւ։ Մինչեւ Սուվարօվսկայա անկարող եղայ տեղս դադարել, այս նատարանից մինչ նոտարանն էլ անցնում՝ կամ պատուհանի առաջ կանգնած, աչքերս ձգում էի երկնքի անսահման տարածութեան վրայ։ Այս նեղ դրութիւնից ինձ ազատեց մի գատուհասալ զոյգ՝ իշխան Վ.-ի դուստրը իր ամուսնու հետ, որ նոյնպէս արտասահման էին գնում։ Ճիշտն ասած. այնքան էլ հետաքրքրական չէր ինձ դրանց զոյգը՝ եւ ես մի կերպ կարճ կապելով պատկերի քնելու։ Բայց քունս խայտառ փախել էր աչերիցս։ Վեր կացայ տեղիցս, տեսնեմ՝ հասել ենք Բօղոպոտիեվսկայա իջեւանը Այստեղ մեզ ընկերացան շատ ճանապարհորդներ, մի երիտասարդ զոյգ իրանց մի տարեկան երեխայով։ Կինը կայտառ, կրակոտ եւ շատ զեղեցիկ էր, իսկ ամուսինը մարտած աչերով, յօներբը կուտակած, կիսաւարձրնի շարժւածքով մի երիտասարդ։ Գիշերը կինն ամբողջ ժամանակ շոյում՝ ու փայփայում էր մանկանը, իսկ մարդը, երեսի օդի ազդեցութեան տակ, որ շարունակ չէնց չիշով զբաղիլն էր քաշում հրաժայելով կնոջը. „Ձեռ տուր-դեռատ“։ Տարաբաղդ կինը ոչինչ չըպատասխանեց, բայց մի խոր հառաչանք թռաւ նրա սրտից։ Վերջը իմացայ, որ երիտասարդ կնոջ ծնողները՝ իր կամքի հակառակ՝ ամուսնացրել էին սրա հետ, որովհետեւ հարուստ է եղել, իսկ այժմ՝ թէեւ հարստութիւնն էլ համարեա սպառւել պրծել է, սակայն էի դադարում՝ գեղն կեանք վարելուց։

Բօռտովի մօտ մեզ ընկերացաւ Մ'օզդոկից եկող յիսունն անց մի պատկառելի տիկին, իր երիտասարդ որդու հետ։ Բանից դուրս եկաւ, որ տիկինը որդուն տանում է Նոր-Նախիջեւան պրոֆեսորութեան։ Երբ իմացայ նրանց ով լինելը, մանաւանդ որ տղան էլ նորատարփ բժիշկ էր, աշխատեցի տիկնոջը համոզել, որ իր որդորդութեան դաշտը փոխի Թիֆլիս, ուր առաւ որ կարող է ունենալ։ Վարմիր գոյներով նկարագրեցի մեր Թիֆլիսի օրիորդներին, առատապատկեան գումարի հասցրի նրանց քարը ու բամբիռը. վերջապէս ճանապարհի գեղեցկութիւնը,



ԱՆԱՆՈՒՐ ԹԻՓԼԻՍ-ՎՂԱՊԿԱԽԱՍՏԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՅ։

ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ՀՈՎԻՏԸ (ԳՈՒԴԱՍԻՐ) ԹՓԼԻՍ-ՎԼԱԴԻԿԱՒԿԱՍԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՅ։

թէ տէնց այս հակայական լեռները տեսնելն ինչ ասէք արժէ. մի խօսքով բոլոր եղած չնչած պերճախօսութիւնս գործ դրի, բայց բանից դուրս եկաւ, որ վատ մ'օ գ ն ե ւ եմ; եւ չը կարողացայ բժիշկների սիրտնաղ մեր զբաղմունքներին մի ծառայութիւն մատուցանել:

Դօնի ափի վրայ Մօրոզովսկ իջեւանումն էլ, որ շատ սիրուն տեսարան ունի, մեզ ընդհարացաւ մի ուրիշ կին մի մատաղատնդա օրիորդի հետ: Սա էլ օրիորդի հօրաքոյրն էր, որ ուխտել էր՝ եղբօր աղջիկը կուրան աւարտելուց յետոյ տանել Մոսկուա մեծ ածել: Բայց ինչպէս երեւում էր՝ „Աղջիկը մնաննայ, մայրը ինանա՞ էր: Ամեն մի շնչին երեւոյթ զրաւում էր նորաւարտ ինստիտուտի ուշադրութիւնը ու իր անսպառ հարց ու փորձով ինձ համբերութիւնից հանելու վրայ էր, երբ զանգը տւին եւ ի լուր ամենուցն զանգատարը զոչեց. Խարիովի կայարան. գնացքը կանգնում է ժամ ու կէս: Լաւ միջոց էր թնթեւսիկ ինստիտուտից ազատուելու. խնդրի գլխարկս ծածկեցի, դուրս եկայ վագոնից եւ մի կառք նստելով պատնեշի քաղաքը: Խարկովը մեծ քաղաք է, փողոցները լայն են եւ ուղիղ, բայց մեր Թիֆլիսի պէս շատ փոշոտ:

Խարկովից մեզ ընկերացաւ մի երիտասարդ տղայ եւ չընայած, որ դեռ առաւօտ էր, սակայն նա արդէն իր երկրագործութիւնն ըստ կարգին Մեր բիսնդէկի արել էր Բաբոսին եւ ամեն մի հինգ վայրկեանից իր պաշտամունքը շարունակում էր: Սրան, կարծես թէ ուղեկցում է մի ուս երիտասարդ, առողջահագմ, շատ զեղեցիկ, պերճախօս էին: Սա իր հետ ունէր շատ լաւ ուտեստ, մի բանի տեսակ խմիչք: Առաջարկում է այդ պարոնին ընդհարանալ իր հետ եւ միասին նախաճաշել, որ ընդունում է երգելով „Այ գաղաւա, գաղաւա, ան դումնաւա. դումնաւա՞: Այս ժամանակ չբանում է բլիթով երիտասարդի պայուսակը: Հարայ-հրօցն ընկնում է, զեղեցիկ եւ լեզանդն կինը կասկած է յայտնում մի պարոնի դէմ, իսկոյն սկսում է հանդուրժող եւ բանից դուրս է գալիս, որ այդ երիտասարդը Թիֆլիսից է գալիս ու գնում է իր հայրենիքը—Բէլգորոդ, եւ ուտաց տոգ. սեմինարիայի աշակերտ է, հանում է իր թղթերը եւ ապացուցանում՝ իր անմեղութիւնը: Բէլգով երիտասարդը ներողութիւն է խնդրում այդ պարոնից: Հանում ենք Բելգորոդ այդ զեղեցիկ կինը չբանում է: Ձեռայ խնացանք, որ հարցած երիտասարդը Պետերբուրգի ամենայայտնի փաստաբաններից մէկն էր, որ մի շատ մեծ քրէական գործ պիտի պաշտպանէր Խարկովում իսկ այն զեղեցիկ կինը հակառակ կողմից է եղել ուղարկուած, որ իր ճարպիկութեամբ կարողացաւ գողանալ տալ նրա թղթերը:

Բէլգորոդը ապիտակաշէն, շատ նկեղեցիներով, բարձր զմբէթներով, մեծ, զեղեցիկ եւ մարդաբ քաղաք է: Գնացքն այստեղ կանգնում է կէս ժամ, այնպէս որ կարելի է կառք վարձել եւ մի պտոյտ անել քաղաքում: այդպէս էլ ես արի: Այստեղ Կուրսկ գնացող վագոնները փոխւում են:

Երեկոյեան ժամը 5-ին հասանք Կուրսկ, իսկ առաւօտեան 8-ին՝ Տուլա, որ յայտնի է իր պղնձի, սամովարների գործարաններով. այստեղ կայ եւ շաքարի գործարան: Տուլա քաղաքը շրջապատւած է անտառով եւ լաւ տեսարան ունի, իսկ Կուրսկ քաղաքը իջեւանից 4—5 վերստ հեռու մի բլրի վրայ է: Սրանք նոյնպէս մեծ վնաս ունէին մեզ՝ գանձակեցիների պէս երեսթուղու գիծը քաղաքով չանցնելուն համար եւ նոյնպէս մեղաւոր են գանձակեցիների պէս, որովհետեւ երկաթուղու վարչութիւնից մեծ փող են պահանջել քաղաքով գիծն անցկացնելու համար: Այժմ թէեւ քաղաքացիք իրանց հաշւով մի գիծ տարել են, սակայն անօգուտ:

Կէսօրին հասանք Սերպուխով իջեւանը, որ նշանաւոր է նրանով, որ Սերպուխով յայտնի է իր մանուքն, չթի եւ այլ գործարաններով: Ունի շատ եկեղեցիներ, մինչեւ անգամ ոսկեզօծ գմբէթներով: Բարեւով իջեւանում, որ Տուլայի եւ Սերպուխովի մէջ տեղն է, մեզ ընկերացաւ 14 տարեկան մի պատանի: Սա Մանկաւօվ գաղղիերէն-ռուսերէն բառգիրք կազմողի տղան էր որի ծնողքն այժմ ապրում էին Իրանց սեպհական ագարակում: Սրա ասելով հայրը վաճառում է ամեն տարի 6000 օք. իր բառգրքից, 10 ր. տարը. ուրեմն տարեկան 60 հազարի, որից, տղայի ասելով $^2/_3$-ը զուտ մնում է Իրանց: Սէտցաւ միտքս դարձեալ դէպի մեր աշխարհը, դէպի մեր հրատարակութիւնները. ասում էի ինքս ինձ, ո՛վ է իմանում, գուցէ մեր Աղայեանցի Մուշեղին էլ մի օր կըպատմէ պանդուխտ ուղեւորին, որ իր յոգնաւանատակ հօր դասագրքերն էլ նոյնքան ծախւում են եւ մեր Աղայեանցը նոյնպէս հանգիստ իր ազատականութիւնը նստած ծերութեան օրերում անդորր վիճակի մէջ է:

Մեր հանդիպ նստած են երկու օրիորդ, մի Վլադիկօ-քօս եւ մի Մ'ոզդօ-քօս. որոնք շատ տարվիճում էին միմեանց հետ: Առաջինը երկրորդին մեղադրում է, որ նրանք շատ դանդաղ են եւ աքսերող, իսկ վերջինս թէ՝ նրանք անմնաքուր են եւ այլն: Հէնց այս աղմուկով էլ հասայ Մոսկուա:

Ահ այժմ ցտեսութիւն, կնանքս, վաղը կրկին կրգրեմ:

ՔՆՋ ՊԱՇՏՕՂ ԴՕ ԲԱԴՕՄՅՕ

ՀԱՑՈՑ ԱՑԺՄԵԱՆ ԲԱՆԱԻՈՐ ԵՐԳԵՐԸ

Հայոց այժմեան բանաւոր երգերի տեսութիւնն անելուց առաջ՝ կուզենք դեռ եւս մի ճաշակ տալ այդ երգերի ամեն տեսակից:

Այդ երգերից ամենից գլխաւորը եւ ընդհանրացածը բ ա յ ա թ ի ն է: Կան երգեր, որ միայն աշըղները գիտեն, կան որ գիտեն եւ ասում են նաեւ աշըղ չեղողները, բայց բայաթին ամենքը գիտեն եւ մեծերը, եւ փոքրերը, եւ կանայք, եւ տղամարդիկ: Բայաթով են յայտնում իրանց վիշտը—դարդը վիճակը, կսկիծը, տրտմը. բայաթով են յայտնում իրանց սէրը, փափագը, կարօտը. բայաթով են յայտնում իրանց բոդքը, տրտունջը, անբաւականութիւնը. բայաթով սգում են իրանց մեռելի վրայ, եւ վերջապէս բայաթով արտայայտում են ամեն տեսակ միտք եւ զգացմունք:

Բայաթու ոտանաւորը միշտ չորս ոտն է ունենում: Գլխաւոր միտքն ու ասելիքը վերջին երկու ոտքումն է լինում՝ պարտնախօսած, իսկ առաջին երկու ոտքի մէջ միտք չի լինում, դրանք ծառայում են չորրորդ ոտքին իբրեւ օժանդակ՝ յանգի համար եւ ընկնում են ձայնարկութիւնների կարգը: Առաջին, երկրորդ եւ չորրորդ տողերը միեւնոյն բառն են վերջանում: Այդ բառը առաջին տողում անորոշ է լինում, իսկ երկրորդ եւ չորրորդ տողերում ջոկ-ջոկ նշանակութիւն է ստանում: Այս է պատճառը, որ բայաթին սովորաբար թ ու ք ր ք ն են ասում, որովհետեւ թ ու ր ք ե ր ն ում շատ են այն բառերը, որոնք երկու եւ աւելի նշանակութիւն ունեն, իսկ հայերէնում այնքան չըկան: Բայց շատ անգամ էլ այս կանոնին չեն հետեւում եւ բայաթին յօրինում են վիճակի երգի ձեւով: Օրինակի համար բերենք մի քանի բայաթի, որ մենք պրը թ արգմանել ենք, պրը փոխադրել եւ որը նմանութեամբ եւ հետեւողութեամբ գրել:

1. *Իմ սիրելին ջուր ածեց,*
Ամանումն ջուր ածեց.
Սրտիս եղ բանալու տեղ
Գլխիս սառը ջուր ածեց:

2. *Կանչում եմ, ախ, վեր կալաւ,*
Վէր էղրաւ, վեր կալաւ.
Ես թզենի բուսցրի,
Բայց նա տատասկ վեր կալաւ:

3. *Ա՛խ, թռաղն ընկաւ իմ՛ ճեռը,*
Տան թռաղն ընկաւ իմ՛ ճեռը.
Շամանմն ուզեցի բռնել,
Բայց թռաղն ընկաւ իմ՛ ճեռը:

Այս բայաթու մէջ շամանն աղջիկն է, իսկ թռաղը, որ է ոսկեսաղ, աղջկայ մայրն է. մոլթն է եղել, չի որոշել, եւ շամանի տեղ թռաղն է ընկել ճեռը:

4. *Ես կանչում՛ եմ՛ այն այգին,*
Այն առաւօտն այն այգին.
Ուր ոչ վարդ կայ, ոչ բիւլբիւլ,
Թող շօլ դառնայ այն այգին:

Այս բայաթին ասել է մի պատան իր Հարսի (տղայի կնոջ) վերաբերութեամբ, որ անզաւակ է եղել, նրան նմանեցնելով այնպիսի մի այգու, ուր ոչ վարդն է փթթում եւ ոչ սոխակը երգում: Հարսը նրան պատասխանում է հետեւեալ բայաթով, որով անզաւակութեան մեղն իրանից հեռացնում է.

5. *Կանչում՛ եմ՛ ծոր են ուզում,*
Դաշտ թռղած՝ ծոր են ուզում:
Ջուր չի-ընկած ծառիցը
Տանձ ու խնձոր են ուզում:

6. *Պապիկն եմ՛ ես այս քարից,*
Այս պատակից՝ այս քարից.
Ոչ հայր ունիմ՛ եւ ոչ մայր,
Ծնունդ առայ այս քարից:

Այս բայաթին մի հայ ստրբի հանար է ասած, որի թ ու ր ք ե ր ն է.

Լալայամ՛ մանն բու դաշտան,
Բու պայադան՝ բու դաշտան.
Նա աթամ՛ վար, նա անամ,
Հիպիր օղդամ՛ բու դաշտան:

7. *Մի՛ թռչուն եւաւ ծովից,*
Հարցումն արաւ աշխարհից.
Նեղէ մեռնելու էի,
Էլ ինչո՞ւ ծնայ մ'օրից:

Այս բայաթին գրած է Թիֆլիսի խօջի վանքի պերեզմնատունը մի դամբարանի վրայ թուրքերէն բառերով այսպէս.

Բիր դուշ էլտի գարեեադան,
Խաբար ալդի դիւնեադան.
Ջոնքի էօլաջաղըմ,
Նեմ դոդըմ անադան:

8. *Աշըղ եմ', եարս, ներսից,*
Այրւեց ջիգարս ներսից.
Աչքս դուսը մնաց,
Դուրս չեկաւ եարս ներսից:

9. *Ես աշըղ եմ՝ քարն այրւի,*
Անասուն այրւի, քարն այրւի.
Ուզում ես մի ամս քաշեմ,
Քուռը ցամքի, քարն այրւի:

Բառական է: Այս նմուշներից երեւում է արդէն, որ բայաթու առաջին երկու տողերը միշտ կազում են իրանց միանման թեաեր. ամբողջութիւնն էլ մնում է անփոփ, բայց առոյգները զանազան ձայնարկութիւններով բաւականին հասնելոցնում են, առանց այդ էլ իրանց հասնոր շատ անույշ երգը: վերցնենք, օրինակի համար, գրանցից մէկը եւ կազմենք այն միջանկեալ ձայնարկութիւններով, որոնք տաղիս գործ են գնում:

Աշըղ եմ', եարս, ներսից,
Ա՛յ եա՛ր, ա՛յ եա՛ր, ա՛յ եա՛ր . . .
Այրւում եմ', մեռնում եմ', քեզ մատաղ. . .
Ազքիս լո՛յս իմ անույշ, մեռնում եմ', ՀԷյ. . .

Այրւեց ջիգարս ներսից.
Ա՛յ եա՛ր, ա՛յ եա՛ր, ա՛յ եա՛ր . . .
Ա՛յ սնաքանդ, ա՛յ անպուճ,
Ա՛յ ամման, ա՛յ Հոպիս, մեռնում եմ', ՀԷյ. . .
Աչքս դուսը մնաց,
Դուրս չեկաւ եարս ներսից:
Ծաղիկ ջան, շամամ ջան, վարդիկ ջան,
Ա՛յ եա՛ր, ա՛յ եա՛ր, ա՛յ եա՛ր,
Զարդդ տամեմ, մեռնում եմ', ՀԷյ . . .

Բայաթու վերջին երկու տողը կրկնում է առաջը աւելի ոգեւորուած եւ նորանոր ձայնարկու բառեր աւելացնելով. ասում է այրւելով, ծռմռւելով, պլտկը պատռելով, բայց իր երեսի արտայայտութիւնը չի համապատասխանում երգի բովանդակութեանը: Լսողների էլ ուրախութեանը չափ չկայ. եթէ ասփրի վրայ են, ամենքը միաբերան լրատում են—

—Հա ջա՛ն, հա ջա՛ն, ձայնիդ մատաղ, քեա՛փ, քեա՛փ . . . ՀԷյ . . . Հուռռա՛. . .

Գլխաւորն ուրեմն ասածը չէ, այլ ինչպէս ասելը, մարդկանց ճաշակին ու սրտմտութիւնը, երգի եղանակը, ձայնի բարձրութիւնը:

Միւս երգերի մասին եկող անգամ:

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր բարեգործական ընկերութիւնների պաշտամունքների սեզօնն սկսուեց: Տրուեցան արդէն երկու պաշտամունքներ՝ միմը յօգուտ „Կանանց Բարեգործական Ընկերութեան“, միւսը՝ „Հայերէն գրքերի հրատարակչական ընկերութեան“: Երկուսն էլ տանեմին յաջողութիւն տուեցան:

***

Տաճկական դատարանն արդարացրեց յայտնի Մուսա-Բէկ քիւրդ ահաբեկապետին, որ մեղադրուում էր Հայաստանի մէջ կատարած ահաբեկութիւնների, անէրաժշտութիւնների եւ սպեռանգութիւնների մէջ:

***

Տէրտէրեան, կարճէն փուշտ ևս տարտամութեան դատապարտած Թիֆլիսի ժողովարանի դանիմէլ վերջապէս միանգամ արժանացաւ միլերին աստիճանի գեղեցիկ երեկոյին, հինգշաբթի առաջոյ 4-ին: Նպատակը հասնակներէր եւ երեկոյին մասնակցողներն էին ամենասազին մարդիկ—մանուկներ. ժամն ու տասնից չեղող մանուկների ոտքս խրճջոցը վերջացաւ ու ներքին հասս հասնակատուներին: Պարերեկոյին անցաւ վերին աստիճանի ոտքս եւ սկզբից մինչեւ վերջը կրտամ էր լսուանների կերպարանք. եւ գիտէք պատճառն ինչ էր. պրոֆեսէրների կարգադրիչներն իրանք ղնամ էին ամենքի սիրտն անկեղծութեամբ եւ ուրախութեամբ:

ԴՊՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր արդի աշխարհիկ գրականութիւնը հարստացաւ մի խանգագին գրքով, որ է Մոսկուա հրատարակուած աշխարհաբար քերականութիւնը հոյակ ծ. վարդապետ Սոկրատեանի: Այդ գրքի պատմական վարդից էր զգացուում մեր գրականութեան մէջ: Հայր Սոկրատեանն իր քերականութիւնը ժողովրդի է դասընթացք՝ ծանօթութիւններով եւ մի գեղեցիկ առաջաբանով:

Խորհուրդ ենք տալիս մեր բոլոր ընթերցողներին գնել այդ պատմական գիրքը եւ կարդալ անպատճառ: Գինը շատ էժան է—1 րուբ. 50 կոպեկ:

ԴԵՂԱՐՎԵՍՏ

ԹԱՏՐՈՆ, ՆՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ, ՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ

Հայոց թատրոն . . . ինչ: Ինչպէս կռնում էր Հրօտոն Սկզարն էլ մի օգնի դրամատիկական ակումբի [!] այն Թէրտէրեանը, որի մէջ ընկել է ձեռ տարի շարունակ: Հայը կարծէք ձանձրացաւ իր ղեզով ներկայացումներ ղնդոց . . . վերջապէս ինչ:

***

Ներկայ սեզօնի օպերայի խոսմբը կարելի է Թիֆլիսում ամենայաջողներից մինը համարել: Այս սեզօնում Թիֆլիսի մեջօնաները զարմանալի ոմանցան ղանի այնպիսի արտիստներին ինչպիսիքն են տ. տ. Լիսկաւսովին, Բոսսի, Լաստներեր, պ.պ. Վռանդերիկ ու Վիկերտոն: Հին սեզօնի խմբից մնացել են այս տարի քորոթ Թիֆլիսցիներին համակրանքի ու սիրերի տ. Զարուդնայա եւ Ազռանասյա քարիոճ պ. Տատարկով ու քաոս պ. Մօրչանովսկի: „Արտիստիքական ընկերութիւնը„ ինչպես կռնում է ոչինչ միջոցներ չէ խնայում օպերային ներկայացումները քարմրացնելու համար. այդ կռնում է ինչ նրա հարուստ բեկտրոնդից, եթէ նրա հրատարած ստորիտուներից: Իսկ եթէ հասարակութիւնն այնքան էլ ղնում է թատրոնը, այդ էլ բացատրում է նրանով, որ այս տարի ձիայ այն արիւեստական դրդռոմը, որը կար անցեալ սեզօնին շնորհիւ „Մեղվեդիստոնիների„ եւ Տարտասկիստների„ կոմսակցութիւններին: Կարճ ժամանակով օպերային խոսմբը գնացած էր Բագու, որտեղից ստացուում էր ամենատուլական ղոդեր խմբի յաջողութեան մասին. իսկ այժմ մենք կրկին գոստմունքիան կոնեենանք ղնել յայտգնի արտիստներին եւ կրնաղդղնենք „Տարագի„ ընթերցողներին մեր ապատոդութիւններս:

Պակաս յաջող չեն եւ պ. Փոլկատոի օպերեւոները, որոնք ի հարկէ չեն կարող ոանեւնալ մեր հասարակութեան վրայ այն կրթիչ եւ գեղեցկատեսական ազդեցութիւնը, ինչ որ ոանին օպերաները եւ դրամատիքական անկրկացումները:

***

Ամռան 15-ին կը բացուի պատկերասանդակ նոր կառուցուած „Փատաց տաճար“ ասնդասանող մեծ շինութեան մէջ, Գօլովինսկի պրօսպեկտի վրայ: Այդ պատկերասանդակում դրուած կը լինի մեր քաղաքի բոլոր նկարիչների նկարները. ի հեսու նրանց եւ մեր աշխատասիրցների պ. Հայհնձեանցի եւ պ. Տէր Ասատուրեանի պատկերները:

***

Պ. Ե. Ծատուրեանի մագազինում մենք տեսանք մի քանական չափոսած նկար Պ. Գանդակճի. դա մի նկարն գազանանալի կենդանի նայուածքով, որի մէջ արտահայտում է հայրենիքից, հօրից, մօրից զրկի, աշխարհի ոդոտ հոգին: Այդ պատկերի օրիգինալին ճանաչում է ամբողջ Թիֆլիսը, այդ պատճառով իսկոյն աչքի է ընկնում այն սխալը, որ ներկինակը գրան նկարներս իր խոսկան գգեստով, հագցրել է նրան ինչպիսի գգեստ:

***

Նոյն տեղում դրուած են ՝ի տես տիկին Ս. Ղազիրեանի գեղեցիկ ստղծած պատկերները:

ԴԻՏՈՒԹԻՒՆ

ՓԱՐԻԶԻ ՀԻՊՆՈՏԻԶԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ:

Նախորդի գիտական թժիշկները վերջին ժամանակներում չափազանց մեծ ուշադրութեամբ սկսեցին պարապել հիպնոտիզմով եւ ներազօտել բնութեան այդ գաղտնի ոյժը: Հայ ընթերցողին պարզ գաղափար տալու համար, մենք կուշխատենք համառօտ կերպով խօսել այդ ոյժի եւ նրա կատարած հրաշքների մասին: Հիպնոտիզմ կոչուում է, այն ոյժը, որ ընդունակ է իշխ մարդուց նրա կամքը, մտածողութեան եւ զգացողութեան կարողութիւնը: Հիպնոտիզմի ենթարկուած մարդը ընկնում է մի տեսակ արթնութեան քնածութեան մէջ եւ ամեն բանում հնազանդում է այն մարդուն, որից նա ստացել է հիպնոտիկական ներգործութիւններ: Փարիզեցի ճանաչուած բժիշկները, պրոֆ. Բարինէյմ եւ Շարկօ, որոնք համարուում են հիպնոտիզմի գլխաւոր ներկայացուցիչները, ամենայն բժշկական եւ հոգեբանական զգուշութիւն ենթադրում հիպնոտիզմից: Նրանք կարողանում են հիպնոտական քնի ենթարկել ամեն մարդու եւ այդ գործողութեամբ ապացուցել, որ իրանց ամենազօր ազդեցութիւնը... հիանալի քնեցնում են եւ հրամայում, որ առաջնանայ. եւ հիանալը ազատվում քնից,

իրան բոլորովին աւտող է զգում: Աւտող մարդոն քնցնում եւ հրամայում են, որ արթնանայոնց չեղող գնայ եւ իր ծանօթ մարդոն տնիցմի բան գողանայ. եւ այդ հիպնոտացած մարդը ճշտութեամբ կատարում է այդ բոլոր հրամանները, առանց հասկանալոն, առանց մտածելոն կամ տարակուսելոն:

Սակայն վերջին տարիներում հիպնոտիզմի գործադրութիւնը չափազանց տարածուեց եւ շարշատաններն սկսեցին այդ ոյժը դէպի չարը գործ դնել: Օր. Ռուսաստանում մի մարդ հիպնոտիզմով կախարդել էր ռատոմ-ներատների աշակերտներին, որոնք տանից դուրս էին գողանում եւ բերում այդ մարդոն . . . Ոտից դրա նման հիպնոտիկական չարագործութիւններ շատ են լինում մանաւանդ հիպնոտական փորձերում: Անցեալ տարի Ռուսաստանում յայտնի Փելդմանը իր փորձերով սահագին անկարգութիւններ արաւ: Այդ չարագործութիւնները աչքի առաջ ունենալով Փարիզի հիպնոտական ժողովում Ժրնեվի հիմնարարաւի պրիւնատ-դոցենտ Լադամ, իր կարդացած զեկուցման մէջ պահանջեց, որ հիպնոտիզմի փորձերը բոլորովին արգելուին: Ժողովն անպայման ընդունեց այդ խնդրի առաջարկութիւնը:

բժշկութիւն եւ առողջապահութիւն

Նշանաւոր գիտնական Բրոուն Սեկարը յայտնեց, որ ինչ մի հնարք է գտել բժշկելոց ծերերի ուռոյժոտիներն: Դրա համար իրը թէ բաւական է վերցնել ծովային մանր խոզերի մի քանի օրգանները, չարդել ներանց եւ յետոյ գտած չրի հետ կաշին տակը արնկել: Մի քանի յաջող օրինակներ եղած են Բրոուն Սեկարը ինքն էլ զարմացած իր արած բժշկութեան հետեւանքի վրայ, յայտնեց որ այդ յաջող դէպքերը պէտք է վերագրել մարդկանց հաւատալուն. իսկ մի պատառը չի հաւատալ, որ ինքը ընդունակ է երիտասարդացնելոց: Ցաւալին այն է որ Փարիզում իսկոյն յայտնեցան միքանի բժիշկներ, որոնք հաւատացնում են թէ իրանք արդէն փորձեցին Բրոուն Սեկարի միջոցը իրանց ծեր հիւանդների վրայ եւ յաջողութիւն գտան....

Ներկայ ամրոպի մի չոր կայծակի ազդեցութեամբ թուաւ աշխարհի չորս կողմը եւ այս մասին օգտու քաղցին ոչ միայն ֆրանսիական բժիշկները ցուցահանդեսի ժամանակ, այլ եւ շատ ուրիշ բժիշկներ, որոնք աւտանց իրանց հաշին տարոն, աւտանց քննելոց Բրոուն Սեկարի աւտաչարկութիւնը, սկսեցին ծակոտել ծերերի կաշիները:

Կենսաբանութեան, ֆիզիօլոգիայի եւ մարդկանց կազմուածքի մէջ եղած արեւան շրջանառութեան հետ ծանօթ մարդոն իսկոյն կերեւայ այսպիսի աւտազակութեան ծիծաղելի կողմը: „Տարազի“ շրջանը մեզ չէ ներում մանրամասն խօսել եւ բացատրել թէ որքան ծիծաղելի է ծերացած օրգանիզմի մէջ արեան շրջանառութեան միջոցով, աւտանց աւտամորացիի գործարանների միջնորդութեան մտցնել կենդանի եւ կենդանացուցիչ նոր օրգանիզմներ: Ցոյն ոչինչը որ մեր բպրեխոնդ մանանայ բժիշկներից մէկը գոնէ կըգտնէ, որ կըպարզէ այս խնդիրը:

Նկարներ եւ պատկերներ.

Ա. Գ. ՌՈՒԲԷՆՇՏԷՅՆ:

1889 թուականի նոյեմբերի 18-ին ամբողջ Ռուսաստանը եւ Եւրոպական գեղարուեստական շրջանները մեծ հանդիսով աշխարհահռչակ նուագածու-գեղարուեստագէտ Ա. Գ. Րուբէնշտէյնի 50-ամեայ յոբելեանը:

Ռուբէնշտէյն ծնուել է 1829 թուին նոյեմբերի 16-ին, նրա հայրը ազգով հրէայ էր Բեսարաբիոց քաղաքից: Դեռ ինն տարեկան հասակում փոքրից Անտոնը իր աբանչելի խաղով դաշնամուրի վրայ զարմացնում էր հասարակութեանը եւ հնորհիւ իր մօր կրթութեան, իր ուսուցիչ Վիլլուանի աշխատանքին նա 1840 թուականին աւարտեց Փարիզում իր ուսումը եւ ապա գնաց Բէռլին ուսումնասիրելու մուզիկայի տէօրեան, որը աւարտելով նա սկսեց իր փայլուն գործունէութիւնը: Ո՞վ չէ լսել „Դէմոնի“ հրատապ երգերը, որ գիշերային խաւարը բորբոքնում է սիրոյ կրակով, ո՞վ չէ լսել „Մակավէյների“ երգերը, որոնք վառում են հայրենասէրների ոգիները. դրանք եւ անթիւ այդպիսի մեծ եւ փոքր գեղարուեստական Փանտազիաներ պատկանում են Ռուբէնշտէյնի վառ երեւակայութեան: Թիֆլիսը նոյեմբերի 18-ին ամենայն շքեղութեամբ եւ արժանաւորութեամբ ընկերացաւ այն հանճարեղ հային՝ ոտնին եւ յարգեց այն մարդու յիշատակը, որ իր երեւակայութեան մի փայլուն մասը նւիրել է մեր կախարդական աշխարհին:

ԴՕՆ ՊԷԴՐՕ ԵԻ ԲՐԱԶԻԼԻԱ

Ամբողջ Ամերիկայում մնացել էր միակ միապետութիւնը՝ Բրազիլիան, այն էլ վերջացաւ 1889 թ. նոյեմ. 15, եւ Բրազիլիան յայտարարեց գաւարակապետութիւն: Բրազիլ. գահընկեց եղած կայսր Դօն-Պէդրօ յայտնի էր իբրեւ գիտնական ազատամիտ եւ ժողովրդասէր կայսր, այնպէս որ շատերը համարձակ ասում են, որ նոյն ինքն Դօն-Պեդրօն օգնել է պետութեան մէջ պատահած յեղափոխութեանը՝ իր ազատամիտ վերաբերոգութիւններով եւ վերին աստիճանի մարդասէր վարմունքով: Ժամանակաւոր կառավարութեան նախագահ է հրատարակուած զինուրալ Դէօդօրօ Դա-Ֆոնսէկա: Նրը յեղափոխութեան գլխաւորները մնան Դօն-Պէդրօ կայսեր մօտ եւ յայտնեցին թէ նա պէտք է հրաժարի գահից, ընդունի Բրազիլիական հասարակապետութեան իրականանալը եւ հետեւյալ Բրազիլիայից, նա պատասխանեց— „Խոնարհում եմ փաստի առաջ եւ ցանկանում, որ նա բախտաւորութիւն բերէ իմ սիրելի երկրին“. այս ասելով նա ստորագրեց իր հրաժարագիրը եւ հեռացաւ Բրազիլիայից:

Խաղաղութիւնը Բրազիլիայում չէ խանգարուած եւ նոր հասարակապետութեան մէջ տիրում է կարգապահութիւն:



ԴՕՆ ՊԵԴՐՕ Բ. ԿԱՅՍՐ ԲՐԱԶԻԼԻԱՑԻ

ԴՈՒԴԱՈՒՐ

Կար ժամանակ, երբ Սատանայի հովիտը կոչւում էր Երանութեան հովիտ, եւ, արդարեւ, զեղեցիկ էր այն ժամանակ հովիտը. նա էր ներկայացնում քնութեան տարերքների գոռոզ կոիւը. այն ժամանակ էէր ծնծում Արագւատ Գուդ լուսան ու քերում նրա կողերը եւ լուսը էէր փշրում նրա ալիքները եւ ձեան սիւներ ու ժայռերի կատրներ թափում նրա մէջ. նա էէր սպառնում Արագւային իր խորերից. այն ժամանակ էէին ճաքճքարում կայծակները, էէր մրընշում փոթորիկը . . .

Գեղեցիկ էր այն ժամանակ Երանութեան հովիտը:

Գուդ լերան լանջերը ծածկւած էին շքեղ կանաչով եւ նրա մէջ տեղ-տեղ սփռւած էին թանգագին ակների նման լեռնային շուշանը, վայրի նարգիզը, մանուշակը. լեռան ծոցից դուրս էր քղխում Անմահական Աղբիւրը եւ հոսում հովտի միջով. աղբիւրի ափին կանգնած էր Դրօնների առւէը եւ նրան շրջապատում էր կուսական անտառը: Անտառի խորքում վխտում էին եղջերուն եւ եղնիկը, ծառերի վրայ երգում էին բիւրբիւրն ու զարւարտիկը . . . Արդարեւ, գեղեցիկ էր այն ժամանակ հովիտը. գեղեցիկ էր, որովհետեւ նրանց հովանաւորում էր Գուդը—Լեռնային Ոգին:

Եւ իրօնները—առւէի քնակիչները էին պատրաստւում, ինչպէս հիմա՝ աւազակութեամբ ու մարդասպանութեամբ. ուրիշի կայքը էին յափշտակում. նրանք գոհ էին իրանց վիճակից. որսի միսը խորովում, ուտում էին, իսկ մորթուց ու քրտից նրանց կանայք եափընջիք ու քալամաններ էին պատրաստում. նրանք լսում էին Անմահական Աղբիւրի ջուրը:

ԱՆԱՆՈՒՐ

Անանուրի եկեղեցում, որ վերջին ժամանակներում՝ նորոգած է, 1851 Թուին հանգուցեալ Արտաշես յայտնի գիգեներալի հրդայր եւ Ռուսաստանայց մէջ ամենամշանաւոր հնախոյզ գնդապետ Արշակ Տէր Ղեւոնեանը կատարած է՝

„Պատուհանի վրայ հայոց եկեղեցու, յատչի ձախ կողմից, սրատի պատեղնում կողմը սրպոյ գլուխ է Ռաճէ Լուսոյց 1107 կամ ք՝ Քրիստոնէից քրիստոնեից 1659 թ.

Հանգուցեալ Տէր Ղեւոնեանը կարծում է, որ սրատեղ 1107 Թուականը դնի ոչ Թէ հայոցը, այլ հիջրեի տարւան, որով ձգնում է ցոյց տալ, որ Անանուրի եկեղեցու չինելու Թուականը ապացուցւանում է, որ դեռ ԺԲ դարում հայերն այդտեղ տաճար եւ ունեցել:

ՅԱՀՈՆ ԼՈՒՐՆ

Թէ ինչպէս է վերաբերում Գլատստոն մահմետի ներկայացուցիչներին: Մի անգամ Գլատստոն Իրլանդիայում ճանապարհորդելիս գիշերը ժամանակ հասնելով Դուբլին քաղաքը, իբրեւ մի հիւրանոցում խրան ատստիկ յոգնած ու ջարդւած զգալով ազատամիտների կուսակցութեան նշանաւոր ներսը, յայտնեց որ ոչ մի պաշտօնական այցելութիւններ չէ ընդունում եւ ընթերցելով շուտով պատիճց:

Այդ րոպէին լուեց զանկազի ոժգին հարւած:

—Ո՞վ է, զարմացած հարցրեց Գլատստոն:

—„Դուբլինի Սուրհանդակ“ լրագրի թղթակիցը—պատասխանեց մի ծայն կօրնդօրից, „լրագիրը դուրս է գալիս ժամը 7-ին եւ դուք մեծ պատիւ կանէք մեզ, եթէ հաղորդէիք նոցա պարլամենտի վերջին վճիռը“:

Գլատստոն առանց մի խօսք անգամ ասելու վեր կացաւ պատճած տեղից, հագաւ գիշերային խալաթը ու դուրս բանալով ներս հրաւիրեց գիշերային հիւրին:

ԿԱՇԻՒԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ

(Հագուստ, լողարան, քաղանիք եւ այլն:)

Հագուստի Նպատակն է կանոնաւորել մեր կազմւածքի մէջ ջերմուԹեան անհաւասարակշռւել, այսինքն նրա քանակութիւնը հաւասարակշռել նրա արտադրութեան հետ: Այդ պատճառով նոյն իսկ նախնական մարդը հագուստ է գործածել, որպէս զի չջրպատի նրան այնպիսի մթնոլորտով, որի ջերմուԹեան աստիճանը օգտակար կարող է լինել նրա կազմւածքի համար: Երբ մենք հագուստ ենք հագած, մի եւ նոյն է Թէ մենք առանց հագուստի լինինք այն դէպքում, երբ մեզ շրջապատող մթնոլորտի մէջ քամի չկայ եւ ջերմուԹեան աստիճանը հասնում է 22—24 o| Ռէօմիւրի, որովհետեւ հագուստը պահպանում է մարմնից դուրս եկած ջերմուԹիւնը: Բացատրւած է որ բոլոր չներկած կտորները միատեսակ են ցոյացնում ջերմուԹիւնը, իսկ ներկածները—ոչ միատեսակ: Ամենից արագ ցոյացնում են սեւ ներկած կտորները, յետոյ կարմիրները եւ վերջապէս սպիտակները: Սրանից պէտք է եզրակացնել, որ ձմեռը աւելի լաւ է սպիտակ հագուստ հագնել քան սեւ, որովհետեւ առաջինը աւելի քիչ է ցոյացնում ջերմուԹիւն քան երկրորդը, երեւի հէնց այդ հիման վրայ բնուԹիւնը հիւսիսային կենդանիներին սպիտակ մորթի է տւել: Ամենից լաւ բաց է Թողնում օդը իր միջով փլանէլը եւ ամենից դժուարը—լայքան: Դրանց մէջտեղն են բռնում,—մազուդը, քաԹանը, գամշը եւ մետաքսը: Շերմակեղէնը աւելի նշանակութիւն ունի մեր մաղմւածքի համար, քան մի ւս գգեստները. մանաւանդ որ Ճերմակեղէնը շատ արագ կեղտոտւում է կաշվի շնչառութիւնից: Բժիշկ Կատէ-պէ-Նօ ցոյց է տալիս որ 1 վուԹի կեղտոտ Ճերմակեղէնի մէջ կայ 2 ֆունտ կեղտ. այսպիսի Ճերմակեղէնը 10—12 օրւան գործածութիւնից յետոյ դեղնում է, վատ հոտ է ունենում եւ այդ կեղտը իր մէջ բովանդակում է 10% ազօտ: Թունաւոր գոյներով ներկած գգեստները նոյնպէս շատ վտանգաւոր են մեր կազմւածքի համար, մանաւանդ փուքօլին եւ այլ գոյները, որոնք չինւում են Թունաւոր դեղերից: Մաքուր Ճերմակեղէնը շուտ-շուտ հագնելը գրեԹէ մի բեւեռն է, ինչ որ յաճախ բազանիք գնալը: Ճերմակեղէնի լւանալու ժամանակ պէտք է ի նկատի ունենալ առողջապահական կանոնները. կեղտը բոլորովին մաքրելու համար բաւական չէ ջուրը եւ սապոնը, պէտք է ջրի հետ խառնել եւ մոնտրաջուր: Կաշւի մաքրութիւնը գլխաւորապէս պահպանում է լւացւելով առն լողարանում եւ բազանիքում: Այս գործողութիւնները ամենից օգտակարը Նշանակութիւն ունեն մեր կազմւածքի համար: Այդ տեսակ լողացումը ամրացնում է ջղային սիստեմը եւ վարժեցնում է կաշին դիմադրել օդի անբարենպաստ փոփոխութիւններին: Աւելի օգտակարը է Ասիական բազանիքը, քան Ռուսականը:

ՄԱՋՆՂԼԻՆ ՄՈՒՇՏԱԿ

ՀԱՆԵԼՈՒԿ

Յատուկ անուն է մեծ տիկնոջ,
Մ՚այր ամենայն զգաստութեանց,
Իշխանուհի Բագրատունեանց,
Դիցուհի մեր Հայկազանց:

Նոյն անունն ընդհակառակ
Դիցուհի է Լատինաց,
Ծնունդ մեծին Արամազդայ
Ջերթ Ամենասն Յունաց:

ՏՕՆԱՎԱՃԱՌ ՄԻՆՉԵՒ ՄԵԾ ՊԱՍԸ

ЛИТ. Р. ШАХБАЗЯНЦА ВЪ ТИФЛИСѢ

—Շատ մի՛ մոտածէք, պարոն, երկու հազար թումանը կը տնենք բանկումը, աղջիկը կը տանք քեզ:
—Ոչ, տիկին, փոխն ինձ տէք, աղջիկը բանկումը պահեցէք:

ԱՖՕՐԻԶՄՆԵՐ

Աղջկայ կոչումն է համեստութիւն, խոպանութիւն, քաղցրութիւն և պարկեշտութիւն:

Ինչ որ մենք լսօք սիրում ենք, անվոխարինելի է, և ինչ որ մենք վոխարինելի ենք համարում, խոստիս երբէք չենք սիրել:

Ցնդողութիւնը մեկ ղրանան է, որտեղից մենք չենք կարող հարմար լինել:

Կեանքը աւելի յաճախ է նմանում ռօմանին, քան ռօմանը կեանքին:

Սառն քաղաքավարութիւնը շատ անգամ անքաղաքավարութիւնից աւելի անքաղաքավարական է:

ԾԱՂԻԿՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Դաշտի մեխակ.—Ես քեզ հաւանում եմ:

Յասմիկ.—Նրբիր իմ բարեկամը, բայց սէրմն պահանջիր:

Ելակ.—Ո՞րը սիրուն քեզ տեսնեմ.

Սպիտակ շուշան.—Անձեռուցիկները յաղթում է:

Կարմիր վարդ.—Ցաղթութիւնը քոնն է:

Սպիտակ վարդ.—Եթէ դու ինձ մերժես, ես յուսահատւած եմ:

Վայրի վարդ.—Ինչու՞ ես դու ինձ զրկում քո սիրուց:

Կապոյտ մանուշակ.—Անդորրութեան մէջ ծաղկում է մեր սէրը:

Սպիտակ մանուշակ.—Ցնորք չէն արդեօք մեր յոյսերը:

ԿԵՆՑԱՂԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Զարդարանքները և թանգարձն զարդերը պէտք է լրել մեկ հագուստին համապատասխան կերպով: Ոսկի զարդերով չպետք ենք զարդարուելուց աւելի անճաշակ բան կայ:

Ընկերութիւնը դուրեկան է միայն այն ժամանակ, երբ նրա մէջ գտնւածները լաբաքանչիւրը աշխատում է կարողացածին չափ զբաղեցնել մնացածներին:

ՏԱՐԱԶ

Նորելուկ հագուստների նկարագրութիւնն անելուց առաջ հարկաւոր ենք համարում մեր բաժանորդներին ասել ահա ինչ: Յայտնի է, որ հնդած առարկան կարող չէ անուն ունենալ: Ինչ վաճառք որ հայկական չէ, եւ ոչ նրա անունն է հայկական: Այսօրւայ հայի թէ կերակուրը եւ թէ հագուստը շատ աղքատ է հայկական անուններով: Սրա պատճառն այն է, որ իր հնարածը չէ ոչ շապօն ու պռպտօն եւ ոչ ծօրմաձ ու քիչֆիֆաձ, ոչ դէրիաձ ու շիքիւաձ եւ ոչ թռչլեօնձ ու առպը:

Մէկ օր, փորձ համար, մտանք մի թազագի խանութ եւ ինդրեցինք, որ մեզ ասէ իր վաճառքի անունները: Ահա մեր լսած անունները—ամրիկա, միտկալ, լանկորտ, սարփինկա, տիլօ, պլատնօ, շիլա, շիլաւարի, ալիշի, մովիդուլճին, դանաւուզ, դալամքար, դատակ, դիմիկիտօն, քալաղայի, բաղդադի, խամ չիթ, զարբաթ, մօռէ, Փայա, տուրա, տէբնօ, բուրսօ, ռիփս, պլիզ,պլպլակա, ատլաս, պարէժ, կրէպ, բատիստ, ժուկօնէտ, բլօնդ, գազբիս, ատաման, դրապ, տրիկօ, սուկնօ. մահուդ, մատլասէ, բայկա, Փլանէլ, բամբազիա, եւայլն եւայլն:

—Բաւական է, ասացի բազագին, մի՞թէ հայկական անուն ունեցող ոչ մի կտոր չունի՞ք:

—Ո՛չ, պատասխանեց բազագը: Հայերէն կայ կտոռ, բայց մենք չունինք. կարելի է գտնել պարսիկների մօտ:

Ուրեմն հայը միայն իր կտաւն է պահել, ասացի ես մտքումս, որ վերջին օրն անպատան չըմնայ:

Զանազան պատառների անուններ լսելուց յետոյ մտայ մի հայ պաշտօնեայ մօտ, որ տեսնեմ այնտեղ ինչ անուններ են գործ ածում: Որ չերկարցնեմ, ոչ մի հայերէն անուն չըկար նրա ասածում:

Ուրեմն ինչպէս պէտք է նկարագրենք մենք նոր հագուստները առանց օտար բառեր գործ ղնելու. ինչ ասենք կրէպին, բանտին, լիֆֆեն, պլիսէին, ատլասին: Հիմա ականայ պէտք է ընդունած ու տարածած բառեր գործածենք, թէկուզ դուրս գայ վրացոց նման „սապօլիտիկօ-լիտերատուրօ գազէթէ„: Գիտենք, որ մեր գործ դրած բառերը շատ խորթ կընդնէնն ծայրայեղ մաքրասէրների ականջին, բայց մենք արդէն այդ կեղծատօր դպիրներին ասել ենք, որ եթէ փռակ ասել չէք սիրում, մի՛ էլ հագնէք, եթէ փլաւ բառից հորշում էք, մի՛ էլ ուտէք: „Սիրում ես սահել, սիրէ եւ սահնակը կրնէ„:

Այսու ամենայնիւ մենք աշխատելու ենք տայացնել օտար բառերը, բայց այս շուտով եւ մէկ անգամից չի լինիլ, այլ փորը առ փորը, մանաւանդ երբ այս գործում կօգնեն մեզ “Տիկնայք փափկասունք հայոց աշխարհին, ոյք զգեհալը եւ զգուեալք են յիւրաքանչիւր բաստեռունս եւ ի գահաւորակս„.

—

1. ՊԱՐ ԱՀԱՆԴԱՎՍԻ ԴԻՐՔ ԻԱ ՀԱՆԴՈՑ ՅՆԵՐՈՎ.

Այս դէրքայի առջեւի ու ետեւի էնքերը կարւած են կրէպից եւ եւ բոլոր երկարութեամբ զուգած ատլասի կոտորներով հագակն սանտիմետր լայնութեամբ, որոնցից երկու միջինները վերջաւորւում են երկնակի հանգոյցներով, իսկ դրսեւիններիվրայ կարւած են ճոխ վարդիկներ: Ետեւի էնքերը զուգած են կոկ ու ճոխ զարդարանքով ատլասի լայն ժապաւէնի հանգոյցներով. նոյն ժապաւէնից է հինւած եւ ծալծլուն գօտիկը: Կարճ լիֆը՝ անտեսանելի կերպով կօճկւած թիկունքին՝ կուտակւած լանջն է, եւ խոշոր հաւարած ու հանգոյցազարդ թեւքերն են:

—

1. ՊԱՐԱՀԱՆԴԱՎՍԻ ԴԻՐՔԻՆ ՀԱՆԴՈՑՅՆԵՐՈՎ: 2 ԵՒ 5 ՊԱՏՏԵՐՈՎ ՆԻ ԼԻՖՈՎ ԴԻՐՔԻՆ:

2 եւ 5. ՊԱՏՏԵՐՈՎ ՆԻ ԼԻՖՈՎ ԴԻՐՔԻՆ.

Մոխրագոյն ղըրադէդամի կաղապար, զուգած ապտնիական անւ ժամնակով (կրուժեվա), որ վրահարած է 30 սանտիմետր լայնութեամբ կտրքերի կոկ էնքերի վրայ ամէն մէկը 34 սանտիմետր լայնութեամբ. իսկ առջեւի էնքերի վրայ 56 սանտ. լայնութեամբ եւ 127 սանտ, երկայնութեամբ. վրայի կողմը հաւաքած ծալ քերով: Երկու տակ դուրս ընկած ծալքի վրայ, որի լայնութիւնն է 18 սանտ. եւ որը բոլոր երկայնութեամբ ընկնում է շրջազգեստի (նուբկա) վրայ, հարկաւոր է ղրադէդամի մի շերտ վերեւից մինչեւ ներքեւ եւ 42 սանտ. լայնութեամբ: Ետեւի մէջքը 160 սանտ. լայնութիւն ունի եւ կարւած է մինչեւ գօտիկը ծալքերով: Սրա



ՊԱՏԿ. 8. ԴԱՐԴԱԿԱՑՈՒՑ ԲԱՂԴ ՄՈՂՈՑ

Որ կարող է ասասած վիտ: Տնեկան օձքի կամ լայնելոյնի է թիկունքի վրայ 16 սանտիմետր: Էդ տեղերնուն օձքը մի նտղց շատ նեղ է եւ ներքնում ավելի վրայ չեղոքում դեպի: Ներքնից ավելի մեծ է եւ վեր է գալիս մինչեւ ուսերի միջին գիծը: Թեւերը 4 սանտիմետր բարձրությամբ ստեղծում են ուղիղ անկյուն: Ձրկնակոց եւ

ԲՈՒԱՍԱՐԵԱՑ

ԹԱՍԻԲ

ՏԱՃԿԱՀԱՍ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿԵՆԱՆԻՑ

գինն է 20 կոպ.

Դիմել „Աղբիւրի“ ընթագրատուն:

1890 XIX **ՄՇԱԿ** XIX 1890

Գրականական եւ քաղաքական լրագիր: Տարեկան գինը 10 ր., կէս տարւանը 6 ր.

Խմբ. Հրատ. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հասցէն՝ Тифлисъ, Редакція газеты „Мшакъ“.

ՍԻՄԷՕՆ ՀԱԽՈՒՄԵԱՆ

ՄԱՆԻԿ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԷՊ

գինն է 40 կոպ.

ՎԻՄԱԳՐԱՏՈՒԻՆ (ЛИТОГРАФІЯ)

ՄԱՍՆԱՎԱՃԷՍ ՀՐԱՉԵԱՑ ՇԱԽՐԱՉԵԱՆՑԻ

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ՝ ձօտաւներ, այցեքարտներ, հարսանեաց հրաւէրներ, գրասենեակի հաշիւներ, գիներ, օրիի եւ ամեն տեսակ իրեղէնների եարլիկներ, որոնց շքեղութեան եւ գեղ արժանաւորութեան մէջ կրնան ստոյգ ապահովել պատուէր տուողները:

Գտաւոնեերից կարող են դիմել՝ Тифлисъ, Литографія Р. Шахбазянцъ, Барятинская, № 8.

3—1

ՅԱՌԱՋԻՆ ՊԱՐԵՄԻԱՆ ԵՐԻՑԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՄԵԾԱՐՈՒԱՆԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՄԵԾԱՐՈՒԱՆԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՄԵԾԱՐՈՒԱՆԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՅԱՌԱՋԻՆ ՊԱՐԵՄԻԱՆ ԵՐԻՑԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՄԵԾԱՐՈՒԱՆԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ